ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏԱՆԻՔՆ ԻԲՐԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ

ԵՐԵՎԱՆ 2011

Գիրքը ներառում է թվով յոթ նյութեր, որոնք վերաբերվում են ժամանակակից ընտանիքների առջև ծառացած հիմնախնդիրներին և դրանց հաղթահարման հոգևոր ուղիներին՝ որպես նախատիպ ունենալով քրիստոնեական օրինակելի ընտանիքը:

Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն ընտանիքներին» ծրագրի շրջանակներում

Սույն գրքի հրատարակումը իրականացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» հայաստանյան ծրագրի աջակցությամբ:
Publication of this book was supported by UNFPA/ Armenia “Combating Gender-Based Violence in the South Caucasus” project.

© 2011 Միավորված ազգերի բնակչության հիմնադրամ

© 2011 United Nations Population Fund

ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր

UNFPA “Combating Gender-Based Violence in the South Caucasus” project

Պ. Ադամյան 14, Երևան, Հայաստան
Հեռ. +374 10 54 17 92
էլ. Փոստ՝ sargizova@unfpa.org

14 P. Adamyan St. Yerevan, Armenia
Tel.: +374 10 54 17 92
E-mail: sargizova@unfpa.org

Սույն գիրքը հրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի կողմից՝ ՄԱԲՀ »Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում« ծրագրի շրջանակներում:

The book was elaborated by the Christian Education Department of the Mother See of Holy Etchmiadzin and World Council of Churches Armenia Round Table Foundation within the framework of UNFPA “Combating Gender-Based Violence in the South Caucasus” project.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ցանկացած ասպարեզ պետք է մուտք գործել ըստ ամենայնի պատրաստված և անհրաժեշտ գիտելիքներով զինված: Չի կարելի հասարակության մեջ որևէ պատասխանատու հանգամանք ունենալ՝ առանց այդ դիրքի կարևորությունն ու պատասխանատվությունն ամբողջապես գիտակցելու: Հակառակ պարագային տուժում է ոչ միայն անձը, այլ իր մերձավորները, շրջապատը, ի վերջո՝ ողջ հասարակությունը:

Հասարակության մեջ չկա և առայժմ հնարավոր էլ չի եղել ստեղծել ավելի կարևոր հաստատություն, քան ընտանիքն է: Ուստի մարդու՝ թե՛ տղամարդու և թե՛ կնոջ կողմից, ամբողջական նվիրաբերական գիտակցություն և պատասխանատվության կատարյալ զգացում է պահանջում ընտանիքը, որն աստվածահաստատ է և աստվածաստեղծ՝ մարդու արաչության աստվածային առանձնահատուկ միջամտությամբ:

Ժամանակակից աշխարհն իր ըմբոստության զանազան ու զարմանազան դրսևորումների մեջ չի շրջանցել նաև ընտանիքը՝ այն դարձնելով պարզապես ժամանակավոր հաճույքի և անձնական ցանկությունները բավարարելու սոսկական հանգրվան, քան թե ինքնազոհության և նվիրումի վերջնական նավահանգիստ: «Համաշխարհային գյուղ» դարձած այս մոլորակում նույն մարտահրավերների առջև կամա թե ակամա կանգնում է նաև հայ հասարակությունը, հայ ընտանիքը, հայ երիտասարդը:

Այս ամենի պատճառով նվազում է պատասխանատվության

զգացումը, զորանում է եսակենտրոնությունը, որտեղ ընտանիքի յուրաքանչյուր անդամ շարունակում է գոյություն ունենալ որպես ինքնուրույն սուբյեկտ, քան թե որպես մեկ ամբողջական մարմնի հարգված և ընդունված անդամ: Քրիստոսի եկեղեցին չի կարող հաշտվել այն իրողության հետ, որ «փոքրիկ եկեղեցին» քայքայվի, մանրանա և ի վերջո, ոչնչանա: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր ոք պատրաստված մուտք գործի ընտանեկան ասպարեզ, լուրջ մոտենա կյանքում ամենալուրջ քայլին, որ է և պետք է լինի ընտանիքի ստեղծումը:

«Ով որ ցերեկով է քայլում, չի սայթաքում». ասում է Ավետարանը: Մեզ մնում է ստեղծել այդ ցերեկվա իրականությունը, որպեսզի մեր զավակներից ոչ ոք, խավարի մեջ հայտնվելով, սայթաքելու գայթակղությունը չունենա: Անգիտությունն ու տգիտությունը հիմք են հանդիսանում անպատասխանատվության և անտարբերության համար, ուրեմն նախ և առաջ պետք է փարատել այդ անգիտությունն ու տգիտությունը:

Այս փոքրիկ գրքույկը փորձում է ստեղծել այդ ցերեկային լույսի տրամադրությունը, որպեսզի «փարատվի աղջամուղջը, վերանա տագնապը, ցրվի խավարը», և առողջ ու կենսունակ լինի մեր հայկական ավանդական և ավանդապաշտ ընտանիքը՝ իր կենսունակությամբ և ուժականությամբ: Ամեն:

ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ. ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

«Երեք բանով գեղեցկացա և վայելուչ երևացի Տիրոջ և մարդկանց առջև: Դրանք են՝ եղբայրների միաբանությունը, մերձավորների սերը, և երբ կինն ու տղամարդը համերաշխ են իրար հետ»
(Սիրաք 25. 1-2)

Ողջ քրիստոնեությունը կարելի է ամբողջացնել ՍԵՐ բառի մեջ. սեր ողջ արարչության նկատմամբ՝ մարդկանց, բնության, կենդանական և բուսական աշխարհի: Քրիստոնեության մեծագույն՝ «սիրեցեք միմյանց» պատվիրանի լավագույն արտահայտություններից մեկն ընտանիքն է: Ընտանիքն առաջին հասարակությունն է («Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է» (ՀՀ Սահմանադրություն, հոդված 35): Այստեղ է մարդն ստանում նախնական հոգևոր և բարոյական դաստիարակությունը: Ընտանիքների հոգևոր-բարոյական վիճակը հիմք է դառնում և՛ հասարակության, և՛ պետության բարեկեցության: Հայկական ավանդական մտածողությունը պետության հիմքում դնում էր երկու կարևոր հենասյուն՝ ընտանիքը և եկեղեցին: Սա անգամ գրականության մեջ իր շեշտադրումն ունեցավ՝ խտացված կերպով Մուրացանի ամենահայտնի գրական հերոսի՝ Գևորգ Մարզպետունու կողմից վերածվելով սերունդներին փոխանցվող կտակի: Ընտանիք և եկեղեցի՝ երկու սրբություններ, որոնք սերտորեն փոխկապակցված են. եկեղեցին՝ յուրովի մեծ ընտանիք, իսկ ընտանիքը՝ որպես փոքր եկեղեցի՝ ընդելուզելով միմյանց: Քրիստոնեական ավանդական ընկալմամբ ընտանիքը հենց ինքը եկեղեցի է: Ավելին՝ Հիսուս Քրիստոսին հետևող ցանկացած հավատացյալ մարդ կենդանի եկեղեցի է, որովհետև միանում է Աստծու հետ, ինչպես ասում է Ս. Պողոս առաքյալը. «...ով մերձենում է Տիրոջը, մե՛կ հոգի է դառնում նրա հետ»՝ ավելացնելով. «Չգիտե՞ք, թէ ձեր մարմինները տաճար

են Սուրբ Հոգու» (Ա Կորնթ. 6.17,19): Սուրբ Գրքի հենց առաջին տողերից երևում է Աստծու հոգատարությունն իր ստեղծած ողջ արարչության նկատմամբ: Իսկ այդ արարչության պսակը հանդիսացող մարդն ամենամեծ պատվին է արժանանում՝ ստեղծված լինելով Աստծու պատկերով և նմանությամբ (տե՛ս Ծննդոց 1.27-28): Աստվածանմանության լավագույն արտահայտությունը մարդու կողմից արարչության շարունակականությունն է: Ստեղծելու, արարելու իր կարողությամբ մարդը յուրովի կրկնում է Աստծուն՝ հանուն մյուսների բարօրության կյանքում օգտագործելով իրեն շնորհված ստեղծագործ հանճարը:

Աստվածանմանության բոլորովին այլ աստիճան է ընտանիքը, երբ այր ու կնոջ միությամբ խորհրդանշական կերպով նոր արարչություն է տեղի ունենում, որն արտահայտվում է ընտանիքում Աստծու պատկերով ու նմանությամբ նոր արարածի ծնունդով: Ամուսնության միակ նպատակը որդեծնությունը չէ, այլ աստվածային սիրո անդրադարձը հասարակության ամենահիմնական բջիջի՝ ընտանիքի մեջ: Այս կերպ մարդն ազատվում է իր անհատական մեկուսացումից, վերագտնում իր անձը բոլորովին նոր որակի մեջ: Գերմանացի մի հեղինակ տղամարդու և կնոջ նման միությունը կոչում է «կյանք մեկ անձի մեջ, որ երկու դեմք ունի»՝ ի վկայություն աստվածադիր «եւ եղիցին ի մարմին մի» սահմանման:

Յուրաքանչյուր դարաշրջան իր մարտահրավերներն ունի: Ամեն մի ժամանակաշրջան իր կնիքն է թողնում հասարակական կյանքի վրա: Նոր ժամանակներին վերաբերող անձի ազատության սխալ ընկալումը, միջմարդկային հարաբերություններում այլևս բարոյական պատասխանատվություն չկրելու հանգամանքը, հոգևոր շատ արժեքներ դեպի աշխարհիկացման տանող ընթացքը լրջորեն խաթարում են կայուն թվացող այնպիսի միավորներ, ինչպիսին ընտանիքն է: Ժամանակակից «ազատական» շատ հոսանքների ազդեցությամբ հաճախ ընտանեկան կյանքը դադարում է սիրո դարբնոց լինելուց:

Սակայն ինչպես որ Քրիստոսի եկեղեցին է հաստատուն, և դժոխքի դռներն անգամ չեն կարող նրան հաղթահարել (հմմտ. Մտթ. 16.18), նույպես և Ս. Պսակով միացած ընտանիքը՝ իբրև փոքր եկեղեցի, հաստատուն է Աստծու օրհնությամբ. «Ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի» (Մտթ. ԺԹ.16): Այստեղ կարևորվում է այն բարոյական աղբյուրը, որտեղից սնվում է ընտանիքը, որով չափվում է բարոյական արժեհամակարգի ամեն մի հիմնաքար: Դա է պատճառը, որ առաքյալն ընտանիքը համեմատում է եկեղեցու հետ. «*... երկուսը պիտի լինեն մեկ մարմին: Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ*» (Եփես. 5. 31-32):

Ա. ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Եկեղեցւոյ հաւատացեալներուն հոգեւոր կեանքին սիրտը եկեղեցական ծէսը կամ աստուածպաշտութիւնն է»: Գարեգին Ա-ի այս սահմանումը լավագույնս անդրադարձնում է անհատական հավատքային ապրումի միաձուլումը ավելի մեծ՝ համայնքային կյանքի մեջ: Եկեղեցին ապրող, շնչող մարմին է: Քրիստոնեական ընտանիքը մասն է ավելի մեծ ընտանիքի՝ եկեղեցու, որի գլուխն է Քրիստոս: Իր ձևով ընտանիքը ճանապարհ է դեպի եկեղեցի, եկեղեցին՝ ճանապարհ դեպի Աստված: Կարևոր է աղոթական կենցաղավարությունը՝ որպես հոգևոր կյանքը սնուցող և զորացնող ամենօրյա ընթացք: Պատահական չէ, որ հոգևոր ընթերցումների ծիսական ժողովածուն մեր եկեղեցու Սուրբ Հայրերը «Ճաշոց» են անվանել, իսկ միջօրեին կատարվող հասարակաց աղոթքի կարգը՝ ճաշու ժամերգություն:

Քրիստոնեական ընտանիքի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը ընտանիքում աղոթքի կյանքի փորձառության փոխանցումն է: Հատկապես ծնողների և կնքահայրերի կող-

մից սեփական կենդանի օրինակով հավատքի սերմերի փոխանցումը մանուկներին և նրանց աշխարհընկալման մեջ Աստծու նկատմամբ պարզ, անկեղծ հավատքի ձևավորումը նմանվում է մեծագույն գանձը պահ տալուն: «Ավելի լավ է Աստծուն սիրել առանց սիրո գիտական սահմանումն իմանալու, քան սիրո սահմանումն իմանալ առանց Աստծուն սիրելու» (Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի): Սա լավագույնս արտահայտվում է ընտանեկան միջավայրում՝ ծնողից զավակ փոխանցման կապով:

Անկախ տարիքային տարբերության, ընտանիքի բոլոր անդամների ներգրավումը եկեղեցական կյանքին լավագույնս անդրադառնում է ընտանիքի ընդհանուր բարոյական, հոգևոր վիճակի վրա, երբ ամեն իրավիճակում հնարավոր է դառնում Աստծու կամքը տեսնելը, զգալը, հասկանալը և գոհությամբ Աստծուն փառք տալը: Մասնակցությունը եկեղեցու ծիսաարարողակարգային կյանքին, սրբությունների հետ հաղորդակից լինելը նպաստում են և՛ Աստծու հետ առանձին հարաբերության խորացմանը, և՛ համայնքային ընդհանուր աստվածպաշտական կյանքի ավելի գիտակից մոտեցմանը: Ընտանիքի համար կարևոր և առանցքային հարց է առաջնորդ հոգևորական ունենալը: Հատկապես նպատակային է ավանդական հայ ընտանիքի օրինակով բոլոր անդամների համար նույն խոստովանահայրն ունենալը, ով, տեղյակ լինելով ներընտանեկան հանգամանքներին, հոգեշահ և օգտակար խորհուրդներով կարող է իր նպաստը բերել սիրո և հոգատարության մթնոլորտի ամրացմանը: Հաճախակի տնային այցելությունները, տնօրհնեքները և մասնավոր ընտանեկան զրույցներն առավել չափով նպաստում են հոգեզավակների և հոգևոր հոր միջև կապի ամրացմանը: Սա նպաստում է համայնքային կյանքում եկեղեցու խորհուրդներին ավելի գիտակից և հոգևոր մոտեցմանը, լինի Ս. Պատարագ և հաղորդություն, պսակ, մկրտություն, թե հոգևոր-բարեպաշտական արարողություններ: Եկեղեցու հետ կենդանի կապն առողջ է պահում հավատքը, ճիշտ ճանապարհի վրա պահում հավատքային առաջընթացը՝ միաժամանակ կապող օղակ հանդիսանալով անցյալի հոգևոր ժառանգությունը սերունդներին ավանդած և հավատի կյանքով փայլող նախնիների հետ, որոնք ընհանուր անունով կոչվում են Հաղթանակած եկեղեցի՝ ի տարբերություն մեր՝ հավատի բարի պատերազմի մեջ գտնվող Զինվորյալ եկեղեցու:

Եկեղեցին ընդհանուր իմաստով անընդհատ նորացող, մաքրվող օրգանիզմ է, քանի որ լինելով Քրիստոսի մարմինը՝ նաև վայելում է աստվածային հոգատարության պտուղները: Դրա համար խորհրդանշորեն եկեղեցու ծոցում եղողները նույնացվում են Նոյի տապանի մեջ մեղքի ծովից պատսպարվող և դեպի կյանքի ափ լողացող ընտրյալների հետ:

Բ. ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ - ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ

«Եւ նրանք հարատևում էին առաքեալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման ու աղոթքների մեջ: ... Հավատացեալներն ամենքը միասին էին, և ինչ որ ունեին, հասարակաց էր» (Գործք 2. 42,44): Առաքյալների քարոզությամբ հիմնված առաջին քրիստոնեական համայնքները սիրո և հոգատարության այս մթնոլորտում էին գոյակցում: Ժամանակների հետ Քրիստոսի Եկեղեցին շատ փոփոխություն կրեց, արտաքին ու ներքին բազում փորձություններով անցավ, նոր տեսք ու կազմ ստացավ, բայց ոգին մնաց նույնը: Եկեղեցու շարժիչ ուժը Սուրբ Հոգին է, որ առաջնորդում է հավատի ազնիվ կենսակերպ որդեգրած հոգիներին, որոնցից էլ կազմվում է քրիստոնեական ընտանիքը: Առողջ բարոյական ու հավատքային արժեհամակարգով ապրող ընտանիքը յուրովի դառնում է դեղատոմս հիվանդ հասարակության համար: Քրիստոնեական ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր ձևով օրինակ է դառնում մյուս ընտանիքների համար՝ ներկայանալով որպես ընտանիքի հոր, մոր, զավակի, նրանց փոխադարձ հարաբերություն-

ների և սիրո արտահայտման յուրահատուկ դասագիրք: Քրիստոնեության վաղ շրջանի հեղինակներից մեկը սա լավագույնս սահմանում է՝ ասելով. «Լավ ընտանիքը բարեգործություն է հասարակությանը»:

Եկեղեցին որպես հավատքով մարդկանց մեծ ընտանիք ընկալելու դեպքում յուրաքանչյուր անդամ հստակ գիտակցում է այդ մեծ ընտանիքի մեջ իր օգտակարության աստիճանը: Հավատքը գործերով կենդանի պահելու ձգտումով են եկեղեցու ծոցում ձևավորվում տիկնանց, երիտասարդների միությունները: Հոգևորականի «Հայր» կոչվելու հանգամանքը խոսում է այն մասին, որ եկեղեցին հոգևոր ու հավատքային կապով միացած մեծ ընտանիք է, ուր ամեն մարդ ձևավորվում է որպես անհատական եկեղեցի և ձուլվում համայնքային մեծ հոգևոր գերդաստանի մեջ:

Հոգևոր հովվի հետ հիվանդ և կարիքավոր մարդկանց այցելությունները, ծերերին և այրիներին տեսակցելն ու մխիթարելը, անօթևան և ծնողազուրկ մանուկների նկատմամբ խնամք տանելը «աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու և կույրերին՝ տեսողութիւն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու» (տե՛ս Ղուկ. 4.19) քրիստոսավանդ կտակի նորոգումն է: Սակայն հավատի բարի կենցաղավարություն գործադրելու մեծագույն դարբնոցը եկեղեցուն հենված ընտանեկան միավորն է, ուր ծնողները զավակներին մանկուց խրատում են աստվածային սիրո պատգամներով. «Քաղցածներին բաժանի՛ր քո հացը և անօթևան աղքատներին տա՛ր քո տունը. եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան» (Եսայի 58.7): Պատահական չէ, որ սիրո վեմի վրա հիմված քրիստոնեական ընտանիքում առկա մթնոլորտը հաճախ համեմատվում է դրախտային վիճակի հետ, որովհետև ուր սերն է, այնտեղ է Աստծու օրհնությունը: Հայոց Հայրապետներից մեկը՝ Մկրտիչ Ա Խրիմյանը, ում սիրող ժողովուրդը Հայրիկ էր կոչել, նմանատիպ ընտանիքի օրինակը ցանկանալով վարակիչ

դարձնել, «Դրախտի ընտանիք» կոչեց այն: Ի վերջո, կարևորը ոչ թե մեծ գործեր կատարելն է, այլ թեկուզ փոքր գործեր, բայց քրիստոնեական մեծ սիրով: Սա է հենց սիրո գերագույն օրինակ ցույց տվող Փրկչի պատվերն իր հետևորդներին. *«Այս է իմ պատվերը. որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ ես ձեզ պատվիրում եմ»* (Հովհ. ԺԵ. 12-14):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻԴԵԱԼ. ԻՆՉԻ՞Ն ՊԵՏՔ Է ՁԳՏԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ. ՀԱՎԱՏ, ՀՈՒՅՍ, ՍԵՐ

Ընդհանրապես մարդ անհատի և մասնավորապես յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում կարևոր պայման է նրա բարոյական կերտվածքը, պատասխանատվությունն իր խղճի, մարդկանց և Աստծու առաջ, ինչը և նրան տարբերակում է մյուս կենդանի էակներից: Յուրաքանչյուր բարոյական համակարգ իր չափորոշիչներն է առաջադրում մարդու և ճշմարիտ կյանքի վերաբերյալ:

Ընդհանրապես իդեալ ասելով՝ մենք կարող ենք հասկանալ.

ա. մարդու և հասարակության պատկերացումն ընդհանրապես կատարելության վերաբերյալ.

բ. մարդկային կյանքի բարձրագույն նպատակը:

Այստեղ անհրաժեշտ է տարբերակել այն չափորոշիչը, որով մենք մոտենում ենք այս հարցին: Կարևորվում է այն հիմքը, որի վրա հաստատվում է բարոյական ողջ կառույցը՝ օրինակ, չափանիշ և ուղեցույց դառնալով բոլոր հետևողների համար: Պատահական չեն հոգևոր-բարոյական չափանիշով գերագույն օրինակի՝ Հիսուս Քրիստոսի խոսքերը. *«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»* (Հովհ. 14:5): Հետևաբար քրիստոնյա մարդու համար անձի, կյանքի, խոսքի ու գործի կատարյալ օրինակ, բառի ամենահիսկական իմաստով, իդեալ է Հիսուս Քրիստոս: Մարդու համար տեսականից հարյուրապատիկ օգտակար է կենդանի օրինակը: Քրիստոսի կյանքի ցանկացած դրվագ ամբողջական մի դասագիրք է յուրաքանչյուր մարդու համար, ով ցանկանում է ապրել ազնիվ ու բարոյական՝ հիմնված չհնացող արժեքների վրա: Այստեղ խոսքն այնպիսի իդեալի մասին է, որն իր հոգևոր-կրոնական բնույթի մեջ չի սահմանափակվում, այլ իր մեջ ընդգրկում է ընդհանրապես Մարդու լավագույն, զտված, ամբողջ դրականն իր մեջ խտացնող կերպարը: Դրա համար է շատ հաճախ Քրիստոս իրեն «Մարդու Որդի» կոչում՝ քարոզածը գործնականորեն ներկայացնելով սեփական կյանքով: Նույնքան հաճախ ուղղակի կամ անուղղակի շեշտում է մարդու հարազատությունն Աստծուն, մարդու մեջ եղող ազնիվը, աստվածայինը, աստվածանմանությունը: Քրիստոսի *«Եղեք կատարյալ, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»* (Մատթ.5:48) կոչը հենց աստվածանմանության վերադառնալու հրավեր է:

Հսկայական տարբերություն կա մարդկային՝ աշխարհային չափանիշների և հոգևոր չափանիշների միջև: Աշխարհային չափանիշները հաճախ են փոփոխվում՝ ըստ ժամանակի, տիրող բարքերի, սոցիալական, տնտեսական, քաղաքական տեղաշարժերի: Բայց հոգևոր՝ աստվածադիր չափանիշները երբեք չեն փոխվում, որովհետև չեն ենթարկվում մարդկային փոփոխական մտքին, ինչպես և վկայում է Հիսուս. *«Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն»* (Մատթ. 24:35):

Ակնհայտ է, որ այն մեծապես տարբերվում է այլ հանրային իդեալներից: Այդ իդեալը պայմանավորվում է սրբությամբ. դա այն ճանապարհն է, որին պետք է ձգտի յուրաքանչյուր քրիստոնյա: Նրա գլխավոր միտքն այդպիսի դեպքում ոչ միայն մարդկային հասարակության կատարելագործումն է, այլև մերձեցումը մի որոշակի բացարձակ աշխարհի, որի առաջ ցանկացած երկրային գործունեություն մնում է անհուսալիորեն անկատար: Տրված բացարձակ, անդրանցական կատարելության իդեալականացումը ընդհանրապես կրոնական իդեալի բնութագրական կողմն է:

Քրիստոնեական բարոյականության հասկացողությունից բխում է, որ այն ենթադրում է հավատ ոչ թե տեսական, այլ իրական Աստծու հանդեպ, Ով սերտ հարաբերությունների մեջ է գտնվում մեզ հետ: Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված իր նամակում գրում է. *«Բայց առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա և վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են իրեն»* (Եբր. 11:6): Աստված, որպես բացարձակ բարի էություն, բարի է իր՝ մարդկանց նկատմամբ դրսևորումների մեջ: Քրիստոնեու-

թյունն իրավամբ հայտնություն է մարդկության պատմության մեջ, Աստծու հայտնությունն անհատի հոգու, մտքի և կենցաղի մեջ՝ մարդու գիտակցության մեջ: Մարդն անդրադարձ է կատարում իր հոգու խորքն ու հնարավորություն ունենանում վերադարձնելու իր ունեցած և մեղսագործությամբ կորցրած երբեմնի մաքրությունն ու սրբությունը: Ձգտում է հասկանալ ու գտնել իր կյանքի իմաստն ու կենդանի օրինակը՝ իդեալ ունենալով այն կենդանի դարձնել նաև իր կյանքում: Այն սահմանվում է միայն մեկի անվամբ՝ Հիսուս Քրիստոսի, հայերեն թարգմանությամբ՝ Օծյալ Փրկչի: Այլ կերպ կարելի է Աստծուն կոչել նաև Սեր, ինչը հստակորեն շեշտվում է Ս.Գրքում. *«Աստված սեր է»* (Ա Հովհ. 4:8), որպես բարի հովիվ՝ Քրիստոս, որ պատրաստ է իր կյանքը տալու բանվոր հոտի համար. Նա, ծառայի կերպարանք հագնելով և Իր Աստվածային փառքից երկիր իջնելով, Խորենացու շարականի բնորոշմամբ՝ բազմում է սուրբ մսուրի մեջ: Նա մի Աստված է, որ հանուն իր սիրելի արարածների՝ կամավորապես խաչի չարչարանքներն է հանձն առնում հենց իր ստեղծած արարածների կողմից՝ նրանց իսկ փրկելու համար: Նա սիրեց մեզ, հավատաց և հույս ունեցավ, որ Իր պատկերն ու Իր Աստվածային հատկանիշները կրող մարդը սրբվելով, մաքրվելով կբարձրանա դեպի իր Արարիչը:

Քրիստոնեությունն իր մեջ պարունակում է մի շարք կետեր, որոնք ցայտուն են դարձնում նրա տարբերությունն ու վեր լինելը մյուս կրոններից: Քրիստոնեական իդեալի դերը ենթադրում է հրաժարում մարդկային մանր գիտականությունից, որը ձգտում է ըմբռնել բացարձակի պատկերացումն ու այդ բացարձակը վերածել կյանքի նպատակի: Բացարձակ բարոյականության գաղափարը, որ բխում է Աստծու կատարելությունից, տանում է Աստծու պատվիրանները կատարելու և դրանց միջոցով մաքրվելու, սրբվելու, իդեալին ավելի մոտ լինելու հանգրվանին: Սա խտացված պատկերն է քրիստոնյայի իդեալի ձգտման: Սակայն սրան ինչպե՞ս պետք է հասնել:

Մարդ անհատը քրիստոնեական այս իդեալին պիտի հասնի

առաքինությունների ձեռքբերմամբ և դրանց՝ իր ապրած հասարակության մեջ, իր ընտանիքում կիրառմամբ: Սա վերացական ձգտում չէ, այլ հնարավոր ապրում ցանկացած անհատի համար:

Առաքինությունները քրիստոնեական բարոյագիտության մեջ բաժանվում են երկու տեսակի՝ աստվածաբանական և բարոյական: Առաջինն իր մեջ ներառում է հավատը, հույսը և սերը, որոնք և կազմում են հիմքը, առանցքն ու գոյակերպը քրիստոնեական կյանքի:

Բարոյական առաքինությունների բաղկացուցիչ տարրերն են խոհեմությունը, արդարությունը, արիությունն ու ժուժկալությունը, որոնք փոխկապակցված են, և դրանցից մեկի շեղումը տանում է նաև մյուսներից շեղման:

Մարդու համար շատ կարևոր է իր կյանքում հավատի, հույսի և սիրո առկայության մշտական զգացումը, Աստծու հետ ապրելու և այդ զգացումները մյուսներին փոխանցելու փորձառությունը:

Մարդն ապրում է Աստծու հոգատարության և սիրո մթնոլորտում. այն ուղղակի տեսնել ու զգալ է պետք: Այստեղ կարևորվում է նաև վստահությունն Աստծու նկատմամբ, որ իրոք Նա խնամում է իր արարածներին. *«Մի՛ ասեք, թե ինչ եք ուտելու, կամ ինչ եք խմելու, կամ ինչ եք հագնելու… ամենից առաջ փնտրեցե՛ք Աստծու արքայությունն ու նրա արդարությունը, և այդ ամենը կտրվի ձեզ»* (Մատթ. 32:33): Կարելի է ասել, որ բարոյականությունը խարսխված է սիրո վրա, բայց քանի որ խոսքը գնում է կրոնական բարոյականության մասին, ապա նրա մեջ ողջ բարոյական հույսերը կատարվում են առ Աստված ունեցած հավատքով: Այստեղից էլ պահանջը՝ սիրել բոլորին: Հռոմեացիներին ուղղված իր նամակում Պողոս առաքյալը գրում է. *«Եղեք խաղաղության մեջ բոլոր մարդկանց հետ….»* (Հռոմ. ԺԲ:18-19): Մեկ այլ տեղում նույն առաքյալը խորհուրդ է տալիս. *«ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակվի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանություններն Աստծուց են կարգված»* (Հռոմ. 13:1): Մարդուն, հետևաբար, թույլատրված չէ ատել նույնիսկ իր թշնամի-

ներին: Ով կատարյալ է հավատով, ուրեմն նա ունի նաև աներկմիտ հույս ու անկեղծ, անշահախնդիր սեր, որի նշանն է առաքինի բարոյական գործերի առկայությունը, որոնք իրականանում են խոհեմությամբ, արդարությամբ, արիությամբ ու ժուժկալությամբ:

Ուղղափառ հավատքը առաքինությունների հիմքն ու պատվանդանն է, որը ճանաչել է տալիս Աստծուն: Աստվածճանաչողության ճանապարհին միանում է հույսը, որն ակնկալիք է հավատքի ծանուցած և խոստացված բարիքների նկատմամբ: Սրանց է միաձուլվում նաև սերը՝ միավորիչը հավատքի և հույսի: Հետևաբար, ինչպես Կոստանդնուպոլսո հայոց Պողոս պատրիաքն է բնորոշում, հավատքն աստվածճանաչողության է հասցնում մեզ, հույսը՝ հասցնում հավատքի ընկալման, իսկ սերը՝ միավորում այդ ամենը:

Միայն Աստծու հանդեպ հավատի միջոցով գոյություն ունի սերը, որն ամբողջական ժխտումն է եսասիրության՝ էգոիզմի, և դրա համար էլ սերն ամենաբարձր և արժանի ցանկությունն ու մարդկային ձգտումն է: Այդ ժամանակ մարդը կարող է հրաժարվել եսակենտրոնությունից և ուսանել ճշմարիտ սեր՝ ազատվելով աշխարհի հանդեպ կախվածությունից: Հավատը վստահություն է Աստծու հանդեպ ոչ նրա համար, որ մենք ցանկանում ենք վստահել նրան, այլ քանի որ նրա ողջ արարչությունն անուղղակի ապացույցն է մեր նկատմամբ Աստծու հոգատարության: Աստծու հանդեպ առանց անձնական, քրիստոնեական հավատի, առանց կրոնի բարոյականությունը չի հասնի անհրաժեշտ հիմնավորմանը: Հավատը վերաբերմունք է պայման չհանդուրժող բարոյական կանոնների, և դրանց սրբությունն ըստ անհրաժեշտության ենթադրում է աներկբա հավատ առ Ամենասուրբ Աստված, որ *«մարդ չէ, որպեսզի խաբենք կամ մարդու որդի, որ սպառնա»* (Թվոց ԻԳ:19):

Աստծու հանդեպ այս հավատի ու վստահության հետ սերտորեն առնչակից է քրիստոնեական հույսը: Եթե հավատը վստահություն է անտեսանելի Աստծու նկատմամբ, ապա հույսը վստահությունն է, որ արարչագործության նպատակն ու մարդու փրկագործությունը՝ որպես բարձրագույն բարիք, պետք է անպայման իրականանա:

Հույսի առարկաներն են նախ՝ մարդկային ազգի կատարելությունն ու երջանկությունը, ապա՝ տիեզերքի կատարելությունը: Մասնակիորեն հույսի առարկան ազատագրումն է մեղքից և մահվանից, մարդկային դրական էության ողջ ուժերի արտահայտումը և մարդու միությունն իր Արարչի հետ: Հույսի ձգտման առաջին և գլխավոր նպատակն ապագա կյանքն է անժամանակի մեջ: Սակայն որքանով որ բարոյական կատարելությունը հասանելի է նաև այս երկրի վրա, հույսի առարկան նաև այս երկրային կյանքն է, անգամ մարմնական բարիքը՝ առողջությունը, հանապազօրյա հացը և այլն, որքանով որ նրանք անհրաժեշտ են մեր հոգևոր առաջընթացին: Կարելի է ասել, որ քրիստոնեական իդեալի և կատարելության իրագործումը կսկսվի այն ակնթարթից, երբ մարդ հասկանա քրիստոնեության իրական ընդգրկունությունը, այսինքն՝ այն փաստը, որ Աստված մարդու Բարեկամն է, Ծնողը, Հայրը, որից խորթացել է, և ձգտի վերականգնել բարեկամությունը: Հույսը չպետք է լինի ուղղված ինքն իր անձին: Սա, անշուշտ, վերաբերում է հույսի բացարձակ դրսևորմանը, որը միայն կարող է արդարացնել Աստված: Միայն ուղղակի հավատը բավական չեն մարդուն քրիստոնեական բարոյական բարձրագույն աստիճանի վրա բարձրացնելու համար, որովհետև, ինչպես շեշտում է Հակոբոս առաքյալը, «դևերն էլ են հավատում և դողում Աստծուց»: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է բացարձակ սեր առ Աստված, որը մարդու՝ Աստծուն մերձենալու և նրա հետ ձուլվելու ձգտումն է: Դրա համար էլ առաքյալն այն ավելի վեր է դասում, քան հավատն ու հույսը:

Չնայած սերը, ինչպես հավատն ու հույսը, կազմում է մարդու էական հոգևոր պահանջմունքը և առանց սիրո, ինչպես առանց հավատի ու հույսի, մարդը չի կարող ապրել: Սակայն սերն, ինչպես հավատն ու հույսը, ստանում է վեհ բնութագրություն այն ժամանակ, երբ այն հագենում է իրեն հայտնի ուղղությամբ առաջնորդող պարտքի գիտակցությամբ, որն է սեր առ Աստված: Սա իրականանում է նրա պատվիրանների կատարմամբ, որոնցից առաջինն է՝

սիրել մեր Տեր Աստծուն, և երկրորդը դրա բանալին է՝ սիրել ընկերոջը, քանի որ եթե չսիրենք մեր ընկերոջը, որին տեսնում ենք, չենք կարող սիրել Աստծուն, որին չենք տեսնում: Հարգանքն ու սերը պետք է արտահայտվի ինչպես ընդհանուր մարդկության, այնպես էլ յուրաքանչյուր անհատ մարդու նկատմամբ, քանի որ բոլորն էլ ստեղծված են ըստ Աստծու պատկերի և նմանության և բաժնեկից են լինելու Աստծու արքայությանը՝ միանալով Նրա հետ: Ուրիշի, ինչպես նաև սեփական մարմնի նկատմամբ սերը և դրա կույր, բնական և բնականից ցածր ցանկությունները սեփական հետաքրքրությունների կենտրոն դարձնելը մարդկային ցածրագույն կրքերի մի նոր անդունդ է: Սեփական և ուրիշի անձի նկատմամբ սերն ուղիղ մտքով ու հոգով չի հակասում Աստծու և մարդու հանդեպ տածած սիրուն: Մարդու մեջ կորսված է ինքն իր հանդեպ ճշմարիտ սիրո գիտակցությունը, և քչերն են իրապես սիրում իրենք իրենց՝ որպես Աստծու կենդանի Սուրբ Հոգու տաճարներ: Այս մղումով էլ պետք է ջանքեր գործադրենք՝ դիմացինին սիրելու: Կատարյալ սերը չի նվազում, ուստի և նրան անհրաժեշտ է հարատևել սիրո գործերի մեջ, որն է՝ ամեն ինչից վեր սիրել Աստծուն, ամեն ինչում գոհանալ Նրանից, օրհնել ու փառաբանել Նրան, Նրա պատվիրանների կատարման համար չխնայել ոչինչ՝ ունեցվածք, սիրելիներ, մարմին, կյանք և այլն, հեռու մնալ բոլոր աղտերից ու մեղքերից, միամիտ սրտով սիրել Նրան, ամեն ինչում հույսը դնել Նրա վրա: Սիրո միջոցով նյութական արժեքը դառնում է նաև հոգևոր: Նմանատիպ սերը, սակայն, մարդու մեջ ակամա գոյություն ունեցող զգացողություն չէ, այլ բխում է մարդու կամքից և ձգտում տարածել մնացյալի վրա:

Սերը, ըստ Պողոս առաքյալի, օրենքի լրումն է, որից կախված են օրենքներն ու մարգարեությունները: Հավատն ասես արմատ է, հույսը՝ ոստ, իսկ սերը՝ պտուղ: Բարիք գործողը նա չէ, որ ունի սեր, այլ բարու մեջ հարատևողը, որովհետև կատարյալ համբերությունն է գործը բարությամբ պսակողը: Ամուր բռնենք հավատի ճշմարտությունը, որով ճանաչում ենք ճշմարիտ Աստծուն, սիրում

Նրան՝ ակնկալելով Նրա աներևույթ պարգևները, որ խոստացավ շնորհել հավատով, հույսով ու սիրով իրեն ծառայողներին: Երկրի վրա կատարյալ միջավայրը ընտանիքն է, ուր փոխադարձ սիրո և հարգանքի ճանապարհով կհասնի կատարելության և կտարածվի ողջ հասարակության, ազգի ու մարդկության մեջ: Քանի որ ընտանիքն է այն վայրը, ուր մարդ կարիք չունի իրեն դրսևորելու այնպես, ինչպես ինքն իրականում չէ, որի արդյունքում հայտնաբերված թերություններն ու մեղանչումները պիտի փոխադարձ ներման արժանանան: Այս է սիրո պահանջած զոհողությունը, ջանքն ու եռանդը, որն ուղղված պետք է լինի այդ թերացումների շտկմանը: Դրա լավագույն ձևակերպումը գտնվում է Պողոս առաքյալի կորնթացիներին ուղղված նամակում (Ա Կորնթ. ԺԳ:1-9): Այս խոսքերի մշտական հնչումն ու դրանց հասնելու կատարումն իր ընտանեկան մթնոլորտում պիտի լինի գերակա խնդիր յուրաքնչյուրի համար: Առողջ ներընտանեկան մթնոլորտն սկսվում է գերական իդեալից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին կատարելապես ձգտման, նմանության և միավորման գիտակցությունից: Ահա հավատով, հույսով ու սիրով առլեցուն այս իդեալն է, որն ամուր բռնած՝ պետք է քայլենք սրբության ճանապարհով՝ օրինակ ունենալով առաջին դարերի քրիստոնյաներին և մեր ժողովրդի երկհազարամյա պատմությունը, ուր հայ ընտանիքն է իր զավակներին կրթել ու դաստիրակել Աստծու, իր ազգի ու ժողովրդի հանդեպ քրիստոնեական հավատով, հույսով ու սիրով: Այսպես կրթելով մեր զավակներին՝ մենք կունենանք բարոյապես կիրթ ու ամուր ընտանիք, հասարակություն ու ազգ:

«Գիտե՞ք, թէ այդ ինչ արեցի ձեզ: Դուք ինձ Վարդապետ և Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես ե՛մ. իսկ արդ, եթե ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ. որովհետև մի օրինակ տվի ձեզ, որ, ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նոյն ձևով անեք» (Հովհ, 13:13-15):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՆՀԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հպարտություն-խոնարհություն
Բղջախոհություն-ողջախոհություն
Ցուլություն-աշխատասիրություն

Մարդկային կյանքն ուղեկցվում է մշտական պայքարով. բարձրացում դեպի երկինք՝ Աստվածային սիրո ժառանգություն կամ անկում անդունդ՝ հոգևոր մահ կամ կործանում: Եվ այս ընթացիկ պայքարում մարդկային կենսակերպ մուտք գործած և արմատավորված մոլություններն ավելի են արագացնում մարդու անկումը:

Բարոյազրկությունը, այլասերությունն ու հոգեկործան արարքները բարու քարոզչության լույսի տակ իբրև առաքինություն են հրամցվում մեր հասարակությանը: Այս կեղծ արժեքները, որոնք մարդուն շեղում են առաքինի լինելուց, թվում է՝ առանցքային են, սակայն դրանք թվացյալ երջանկություններ են, որովհետև կարճատև հաճույքը չի կարող վերջնական երջանկության երաշխիք լինել: Պողոս պատրիարք Ադիրանուպոլսեցին գրում է. «Այս կյանքի փառքն ու մարմնական վայելքները նախքան ստացվելը քաղցր են թվում, բայց ստացվելուց հետո մարդու ախորժակը դառնացնում են: Իսկ գիտությունն ու առաքինությունը, որոնք մտքի ու հոգու վայելք են, հակառակն են գործում. նախքան ստացվելը դառն ու դժվարին են թվում, բայց ստացվելուց հետո հոգին քաղցրացնում են»:

Առաքինի կյանքը միշտ գովելի և օրինակելի է բոլորի համար, քանզի այն բարի է: Այդպիսի կյանքով ապրող մարդն ինքնին աստվածավախ է և բարեպաշտ, հոգով բարի: Առաքինի կյանքն ապրելակերպ է, որով մարդ հնարավորություն է ստանում ճանաչելու և սիրելու Աստծուն: Աստծու նկատմամբ հավատն ու նվիրումը արտահայտվում են այն սիրո ծառայությամբ, որ դրսևորվում է դիմացինի հանդեպ: Առաքինությունն Աստծուց տրված շնորհ է, և յուրաքանչյուր քրիստոնյա անհատ, երբ կարողանում է առաքինությամբ ապրել, դրսևորելով ծառայասիրություն, քրիստոնեավայել վարք և սեր տածել ծանոթի ու անծանոթի հանդեպ, այս ճանապարհով իր մեջ Աստծուն ունենալու շնորհն է ստանում, ինչպես որ Ս. Մարիամ Աստվածածինն իր որովայնում սրբությամբ կրեց Մարմնացյալ Աստծուն:

Իսկ մոլությունն անկարգ և անկանոն մի վիճակ է, որն իր կործանարար և բացասական ազդեցությունն է թողնում քրիստոնյա անհատի՝ դեպի Աստված ձգտման ճանապարհին: Ստեղծված անկարգության արդյունքում մարդու ցանկությունները, կրքերը, ձգտումները, բնական վիճակից դուրս գալով, թշնամի և ապականիչ են դառնում՝ մարդուն տանելով դեպի անկում և կործանում:

Որևէ դեղ առողջություն չի պարգևում, եթե չարգելվեն վնասակար կերակուրներն ու ըմպելիքները, և երկիրը պտուղներով չի հարստանում, եթե արմատախիլ չարվեն անպիտան փշերն ու խոտերը:

Քանզի մարդն էլ, ինչպես որ պահպանվում է առաքինությամբ, այնպես և ապականվում է մոլությամբ, ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես, որովհետև մոլությունները ոչ միայն չար են և հակառակվում են ուղիղ բանականությանն ու աստվածային օրենքին, այլև վնասակար են, քանի որ խանգարում են առողջ կեցությանն ու հոգևոր առաջընթացին:

Այս պատճառով Աստծուց երկու տեսակ պատվիրան ավանդվեց. հանձնառական՝ գործելու առաքինություններ, որով մարդ պահպանվում և երջանիկ է լինում, և հրաժարական՝ խուսափելու մոլություններից, որով մարդն ապականվում ու թշվառանում է:

Քրիստոնեական բարոյագիտությունն առանձնացնում է յոթ առաքինություններ և յոթ մոլություններ:

Յոթ առաքինություններն են՝

1. Խոնարհություն
2. Եղբայրասիրություն
3. Հեզություն
4. Աշխատասիրություն
5. Ողորմածություն
6. Ժուժկալություն
7. Ողջախոհություն

Յոթ մոլություններն են՝

1. Հպարտություն
2. Նախանձ
3. Բարկություն
4. Ծուլություն
5. Ագահություն
6. Որկրամոլություն
7. Բղջախոհություն

Վերջիններս քրիստոնեության մեջ հայտնի են նաև մահացու մեղքեր անվամբ, որովհետև սրանք այն գլխավոր մեղքերն են, որոնք, մնալով մարդու մեջ և ապաշխարությամբ չմաքրվելով՝ հավիտենական մահվան պատճառ կարող են դառնալ: Այս յոթ մահացու մեղքերը արմատ են մյուս բոլոր մեղքերի: Գլխավոր մեղքերից առաջին երեքը՝ հպարտությունը, նախանձը և բարկությունը, հոգեկան մեղքեր են համարվում, իսկ մնացած չորսը՝ ծուլությունը, ագահությունը, որկրամալությունն ու բղջախոհությունը՝ մարմնական:

Այս հոդվածում կանդրադառնանք նշյալ հոգեկան մեղքերին, որոնք գլխավորաբար պատճառ են հանդիսանում ընտանեկան տարաբնույթ հիմնախնդիրների:

Հպարտությունը սեփական անձի կարևորության զգացումն է, որը դառնում է բոլոր կործանարար մտքերի, հույզերի, տառապանքների, հիվանդությունների և հաճախ էլ մահվան պատճառ:

Սեփական ես-ի գերակայության զգացումը հանգեցնում է նրան, որ մարդ ուրիշներին սկսում է ստորադասել իրենից, ցածր դիտել և այն թյուր պատկերացումը ձեռք բերել, որ իր բանականությունն ու կարողությունները բարձր են, քան ուրիշներինը: Նա շրջապատող աշխարհի մասին իր միակողմանի պատկերացումներն ունի և վստահ է, որ հենց դրանք են ամենաճիշտն ու լավագույնը: Բայց երբ իրականությունը բախվում է ինքնահնար սին պատկերացումներին, անհամապատասխանության արդյունքում նրա հոգում ծնվում են ագրեսիվ հույզեր՝ չարություն, վիրավորվածություն, ատելություն, արհամարհանք, նախանձ և այլն: Իսկ սրանք էլ իրենց հերթին հանգեցնում են տարբեր հիվանդությունների: Բայց հպարտությունը միայն սեփական անձը բարձր դասելը, շրջապատող աշխարհի և ուրիշների նկատմամբ մեծամիտ վերաբերմունքը չէ: Կյանքի տարբեր հանգրվաններում հպարտությունը մարդուն առաջնորդում է առավել չարաղետ հետևանքների. նա իր ոճրային հարձակումներն ուղղում է մինչև իսկ Աստծու դեմ: Հպարտության հետևանքն էր, որ սատանան իրեն իբրև մեծ մեկը կարծեց և նախանձելով Աստուծո մեծ փառքին՝ ցանկացավ Նրան հավասարվել: Հպարտությունն էր, որ սայթաքեցրեց Ադամին, հպարտությունն էր, որ բարձրացրեց Բաբելոնի աշտարակը ու կործանեց Բաբելոնը:

Հպարտությունը, դիվական ախտ լինելով, Աստծուն ատելի է և մարդկանց այնքան գարշելի, որ իրենք իսկ՝ հպարտները, հանձն չեն առնում խոստովանել, թե հպարտ են: Իսկ ինչու են հպարտանում: Եկեղեցու Հայրերը հպարտության մեղքի պատճառները տեսնում են մտքի կուրության մեջ:

Հպարտության տարատեսակներն են գոռոզությունը, ամբարտավանությունը, սնափառությունը, ինքնահավանությունը, ինքնագովությունը, մեծամտությունը, ցուցամոլությունը, փառասիրությունը, հանդգնությունը, անհնազանդությունը և այլն:

Հպարտության դարմանիչ առաքինությունը խոնարհությունն է:

Արուսյակի՝ սատանայի հպարտության պատճառով մեղքն աշխարհ մտավ, որին հաջորդեց մարդու անկումը: Իսկ մարդուն նո-

ից բարձացնելու և երկնային առաքինությանն արժանացնելու համար տիեզերքի Արարիչը կամովին խոնարհվեց և մարդացավ Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի անձի մեջ: Ինքնակամ բազմաթիվ չարչարանքներ հանձն առավ, անարգվեց, փշե պսակով թագադրվեց, ծաղրուծանակի ենթարկվեց, խաչ բարձրացավ: Խոնարհությունը տիրավանդ առաքինություն է: Վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոս լվաց աշակերտների ոտքերը և նրանց ասաց. «Ես ձեզ տվեցի խոնարհության օրինակը»: Մեկ ուրիշ առիթով աշակերտները Հիսուսին հարցրին. «Ո՞վ է մեզնից մեծը»: Եվ Հիսուս պատասխանեց. «Նա, ով բոլորի ծառան է»: Սա է իրական խոնարհությունը:

Հոգու խոնարհությունը մեղքերից, աշխարհայինից կամովին հրաժարվելն է, որպեսզի կարողանանք Աստծով լուսավորվել ու գնալ երկնային շնորհներին ընդառաջ: Իզուր է այն կյանքը, որի արդյունքը երկնային արքայությունը չէ: Երկա՞ր կլինի կյանքը, թե՞ կարճ, մարդիկ ինչպես կգնահատեն այն՝ արգասաբե՞ր, թե՞ ոչ, միևնույնն է: Քրիստոնյա մարդու կյանքի ձգտումը պետք է լինի Աստծուն մերձենալը՝ ինչի գլխավոր ճանապարհը խոնարհությունն է: Հիսուս Ինքն էլ ասաց, որ բնակվում է խոնարհ ու հեզ հոգիների մեջ: Ամենամեծ խոնարհության ու սրբության օրինակը Մարիամ Աստվածածինն է, ով հնազանդվեց Աստծու խոսքին, որի հետևանքում Աստված նրան մեծ շնորհների արժանացրեց և նրան դարձրեց մարդկային փրկության անոթ:

Բղջախոհությունը մարմնական ցանկասիրության սեռական մեղքն է, որը կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես: Այս մեղքի արմատը մարդու մտքում է, ուր առաջանում է ցանկությունը բավարարելու մարմնական բնազդային մղումները: Այն, նախ առաջանալով մտքում, վերաճում է խոսքի և հասունանալով՝ վերածվում գործի: Այստեղից ենթադրելի է, որ բղջախոհությունը ոչ թե միայն սեռական ցանկությանը կուրորեն հագուրդ տալն է, այլև ցանկական մտասևեռումը: Ամուսնական հարաբերությունը, Պողոս առաքյալի բնորոշմամբ, արդարացված է այնքանով, որքանով պսակադրության սուրբ խորհրդով օրհնվում է նրանց անկողինը և ամուսինների սիրո հարաբերությունը պտղաբերում է որդեծնությամբ, որը նշանն է աստվածային օրհնության: Ամուսնական հարաբերության մեջ, անկախ որևէ պատճառի, երրորդ անձի միջամտությունն առանց բացառության խաթարում է աստվածային արարչագործ խորհրդի սրբությունը և նրանում ներարկում ախտավոր մեղք, որ վերաճելով ի վերջո իր բացասական քայքայիչ գործն է կատարում և դրախտի ընտանիքը, Աստծուց դատարկվելով, վերածում է յուրօրինակ դժոխքի:

Երիտասարդության տարիներին ամենազգայուն, անհանգստացնող և հուզող խնդիրը մարմնական ցանկությունների տարաբնույթ արտահայտություններն են, և նրանք, ովքեր գերի են դառնում դրանց, Աստծու հետ հարաբերության խզման արդյունքում կորցնում են ներդաշնակությունը: Հետևաբար մարդկային մտքում ցանկությունն այն փորձությունն է, որին հաղթելով մարդ կարող է կոփել իր կամքը և զորացնել իր բարոյական նկարագիրը: Իսկ եթե կամովին հագուրդ տրվի մարմնական ցանկության, այն կվերածվի կրքի՝ առաջնորդելով մեղքի կամ մոլության՝ բղջախոհության:

Ցանկալի չէ, որ երիտասարդներն այցելեն այնպիսի վայրեր, որտեղ վստահ չեն, թե կկարողանան հաղթահարել ցանկության փորձությունը, չեն կարողանա ձերբազատվել բղջախոհությունից, քանի որ այս հարցում ինքնավստահը հեշտությամբ կարող է կործանվել, եթե անգամ հոգևոր կյանքով է ապրում: Այսպիսով, եթե մեկը հեռու մնա կրքահարույց իրողություններից, այնքան ավելի կվայելի հոգու խաղաղությունն ու երջանիկ կլինի:

Բղջախոհության մեղքի դեմ պետք է պայքարել ողջախոհությամբ: Սա այն առաքինությունն է, որով կարելի է ձերբազատվել բղջախոհության մեղքից, ներքուստ սրբվել և արդարանալ Աստծու առջև: Ողջախոհությունը մտքի ողջամիտ և Աստծով լեցուն վիճակն է, ուր մեծապես իշխում է աստվածասեր և Աստծուն հաճելի լինելու ձգտումը, այսինքն՝ ուր իշխում է բարի կամեցողությունը,

ազնիվ կեցվածքը և Աստծու տաճարի՝ մարդկային մարմնի մաքուր և անարատ պահպանումը:

Պսակադրության խորհուրդը նույն ողջախոհության խորհուրդն է, այսինքն՝ ամուսինների՝ միմյանց հավատարիմ լինելու թե՛ խոսքի, և թե՛ մանավանդ կյանքի և գործի մեջ:

Ծուլության մեղքով մարդ կարող է լուրջ վնաս հասցնել իր հոգևոր կերտվածքին:

Շատերի համար ժամանակն անբավարար է՝ մտածումներն իրագործելու, ձեռնարկած աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Հարատև աշխատանքը մարդու մեջ կոփում է համբերատարություն և իր աշխատանքի պտուղը տեսնելու հաստատուն հավատ: Հակառակ գործոնն է առկա աշխատանքից խուսափող, ծույլ մարդու պարագայում, երբ հուսահատ հայացք կա վաղվա օրվա նկատմամբ, քանի որ արված աշխատանք չկա, որ պետք է պտղաբերի: Պատահական չէ, որ անապատական հայրերի առօրյայի բաղկացուցիչ երկու տարրերն էին աշխատանքը և աղոթքը, որոնց շարունակական իրագործումով պայքարում էին մեղքի փորձության դեմ:

Ծուլության տարատեսակներից են ձանձրույթը, քնկոտությունը, դատարկակեցությունը, շատախոսությունն ու բամբասանքը, հեշտասիրությունը, թերանալն աղոթելու, եկեղեցի հաճախելու, Աստվածաշունչ ընթերցելու, ուսման և այլ պարտականությունների մեջ:

Հետևաբար պետք է հետամուտ լինել առաքինություններին, որոնք ոչ միայն ավելի ներդաշնակ, սիրով ու խաղաղությամբ լեցուն են դարձնում կյանքը, այլև մոտեցնում են Աստծուն, կյանքն Աստծու հետ քայլելու գեղեցիկ մի արահետ դարձնում, արահետ, որ տանում է դեպի մարդկային ու աստվածային բյուրեղացյալ երջանկություն:

ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ

«Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունն այդպիսիններինն է»
(Մատթ. 19.14)

- Մկրտությունը՝ որպես մանկան հոգևոր ծնունդ
- Ներընտանեկան առողջ հարաբերությունները՝ որպես երեխայի աշխարհայացքի և առողջ հոգեբանության ձևավորման նախապայման

Եկեղեցին միությունն է այն անձանց, ովքեր հավատում են Քրիստոսի վարդապետությանը և նրա արժեհամակարգի կրողն ու նախանձախնդիր պաշտպանն են: Հայաստանյայց եկեղեցի նշանակում է հայությամբ շաղախված, հայեցի նկարագրով հավատացյալների համախմբում, միություն, համամարդկայինին հայկականություն միախառնած հոգևոր մարմին: Հայ եկեղեցին իր ժողովրդի հոգևոր մայրն է, ժողովուրդը՝ նրա հոգևոր զավակը, որովհետև մկրտությամբ ժողովուրդը հոգևորապես ծնվում է եկեղեցու ծոցից և նրանից ստանում իր հոգևոր սնունդը: Սկզբից ի վեր հայ ժողովուրդը ջերմորեն սիրել է իր եկեղեցին և նրա համար պատրաստ է եղել զոհաբերելու ամեն ինչ, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքը:

Եկեղեցու կոչման մեջ է քրիստոնեական հավատքով դաստիարակել ժողովրդին և այդ հավատքն արտահայտել նրա կյանքում և կենցաղում: Այս նվիրական առաքելության սկզբնավորումն առկա է Ս. Գրքում՝ Աստվածային պատգամների ու պատվիրանների գանձարանի ճշմարտությունների ավանդմամբ: Սուրբգրային պատգամները ժամանակի ընթացքում թրծվել են մարդկային կյանքում և մեզ ավանդվել Եկեղեցու ուղղափառ Հայրերի օրինակով: Ու-

սուցչի և առաջնորդողի իր նվիրական դերում միշտ ժողովրդի հետ է, նրա համար և նրա միջոցով է գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որին անդամագրումը կատարվում է մկրտությամբ:

«Մկրտություն» բառը նշանակում է լվացում, մաքրում (կրոնական իմաստով նշանակում է մաքրում նախնական կամ ադամական մեղքից): Այն նշանակում է նաև վերստին ծնունդ, որովհետև մկրտվողը, մաքրվելով ադամական անհնազանդության, նաև մինչև մկրտությունը գործած անձնական մեղքերից, արարողությունից հետո, որպես հոգով նոր մարդ, ծնվում է մկրտության ավազանից: Այս նոր և հոգևոր ծնունդը մկրտված մանկանը դարձնում է Քրիստոսի եկեղեցու անդամ: Մկրտվելով մարդիկ ոչ միայն սրբվում են մեղքերից և որդեգրվում Աստծուն, այլև հարազատանում են իրար որպես սուրբ ավազանից ծնվածներ, Աստծու մեծ ընտանիքի զավակներ: Քրիստոնեական եկեղեցում մկրտության խորհրդի կատարումով քրիստոնեական հավատքը տեսական գիտելիքից վերածվում է ապրումի և դառնում կենսակերպ: Մկրտության ավազանից վերստին ծնված ամեն ոք քրիտոնեական հավատով ու գիտակցությամբ պետք է ապրի՝ անհոգության կամ անտարբերության մեջ չթմրեցնելով իր միտքն ու հոգին: Մկրտությամբ սրբված և փրկված հոգիները պետք է միշտ հավատարիմ լինեն Փրկչին: Փոքրիկը դեռևս չունի չափահասի մտավոր և ֆիզիկական կարողությունները. նա ամբողջովին կախված է իր ծնողներից, հետևաբար ծնողների կամքը, գիտակցությունը, հավատքը, նրանց պարկեշտ վարվեցողությունն ու կենցաղը օրինակ են մանուկների համար: Այդ է պատճառը, որ ծնողները հիմնովին պատասխանատու են՝ արդյունավետ իրականացնելու իրենց երեխաների հոգեմտավոր դաստիարակության և զարգացման գործընթացը՝ ընտանիքում մշտապես ապահովելով բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Մկրտության և դրոշմի կնիքն ստացած յուրաքանչյուր քրիստոնյա վերանորոգ ու հարաճուն հավատքով և անվրեպ հույսով

կկարողանա շարունակել իր երթը մարդկային կյանքի հորձանուտի մեջ, քանզի որպես ուղենիշ ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որը դաստիարակիչ ամեն մի միջոց գործ է դնում՝ նոր սերնդի մեջ բյուրեղացնելու քրիստոնեական հավատքն ու համամարդկային արժեքների նկատմամբ գիտակցությունն ու վստահությունը:

Ս. Մարիամ Աստվածածինը մայրն է Քրիստոսի հարության հավատքով վերստին ծնվածների: Նա Քրիստոսի անունով իրար միացած և մեկ ընտանիք կազմած քրիստոնյաների դաստիարակն է, աղբյուրը՝ հոգևոր շնորհների:

Մեր ժողովրդի կրոնական և աշխարհիկ մտածողության մեջ մայրը հայ ընտանիքի հոգևոր արժեքների պաշտպանն ու հենարանն է, ուր հայ կնոջ և մոր նախանձախնդիր ու հավատավոր կյանքի շնորհիվ տիրում են սերն ու զոհողությունը, քրիստոնեական հավատը և հայեցի ապրելու ու ստեղծագործելու վճռականությունը: …«Տուն եւ ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է, որոյ նահապետական աթոռին վրայ կը նստին ծնողք, հայր՝ իբրեւ թագաւոր, եւ մայրն իբրեւ թագուհի, եւ կը կառավարեն հպատակ ընտանիքը»:[1]

Ազգային հաջողություններն ու անհաջողությունները, առաջադիմությունը կամ դժվարությունները առավելաբար կախում ունեն ընտանիքից և ընտանեկան դաստիարակությունից: Աստվածաստեղծ մարդու կյանքն ինքնանպատակ չէ. նա կոչված է շարունակելու Աստծու գործը՝ կազմելով ընտանեկան իր բույնը՝ որպես մանրանկարը դրախտային կյանքի: Սա նպատակակետն է յուրաքանչյուր քրիստոնյա մարդու:

Ընտանիքը քրիստոնեական հասկացողությամբ Սուրբ տաճար է և աշխարհամատուռ, որտեղից ծնունդ է առնում քրիստոնեական եկեղեցին: Ընտանիքը խարիսխն է եկեղեցու, ազդակը նրա զորության: Ընտանիքը սուրբ է ու նվիրական, և քրիստոնյայի պարտա-

1 Խրիմյան Հայրիկ, Երկեր, էջ 207, Երեւան, 1992

կանությունն է նախանձախնդիր լինել այդ սրբության, մաքրության և բարոյական վերելքի համար: Այնքան վեհ է ընտանիքը, որ նրա հոգատարությունը երաշխիք է հավատքի զորության, իսկ անհոգությունը՝ նշան հավատքի ուրացության: «Իսկ եթէ մէկը իւրայիններին եւ մանաւանդ ընտանիքին խնամք չի տանում, հաւատն ուրացել է եւ աւելի չար է, քան անհաւատը» (Ա. ՏԻՄ. 5:8): Ընտանիքը՝ իբրև հիմնաքար եկեղեցու, հարկ է, որ կառուցվի ժայռի վրա, այսինքն՝ աստվածային սերն ու քրիստոնեական հավատը լինեն նրա պատվանդանը, որպեսզի վերջինս մնա ամուր և զորավոր:

Ընտանիքը ոչ միայն հասարակական, այլև բարոյական և հոգևոր այն միավորն է, որի վրա հաստատվում է ազգային կյանքը: Բարոյական և հոգևոր արժեքների նկատմամբ հավատով առաջնորդվող ընտանիքը վայելում է Աստծու օրհնությունը:

Դարեր շարունակ մեր ժողովրդի բարոյական զորության և ամրության միջնաբերդն ամուր և կայուն ընտանիքն է եղել: Սա ամրակուռ այն հենարանն է, որի վրա հաստատվում է ազգն իր բազմադարյան պատմությամբ ու մշակույթով: Ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը, քաղաքակրթությունը ժառանգությամբ թե կրթությամբ սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Սա այն սրբազան վայրն է, ուր թրծվում է անհատի նկարագիրը: Ավետարանական հասկացողությամբ ընտանիքի երկու լուսեղեն սյուները հայրն ու մայրն են, որոնց շնորհիվ է կառուցվում ընտանիքի՝ դեպի երկինք գմբեթավորվող տաճարը, ուր պիտի կրթվեն, դաստիարակվեն ու կյանքի պայքարին պատրաստվեն հայ եկեղեցու մանուկները:

Ընտանեկան հարկը փոքրիկ եկեղեցի է, և ծնողները՝ այդ եկեղեցու պաշտոնյաները: Ամուսինների սիրո, փոխադարձ անձնվիրության մթնոլորտում ծնված և սնված մանուկն անկարելի է, որ չազդվի բարոյապես կազդուրիչ այդ ներգործությունից: Փոքրիկն ինքը ակամա դառնում է ամուսինների սիրո միացման ազդակը և ուրախության աղբյուրը: Ընտանիքը երեխայի վրա ունեցած իր խորը, առանձնահատուկ ներգործությամբ ուղղորդում է նրան դեպի

աստվածճանաչողության լուսավոր ճանապարհներ: Ընտանեկան հարկի պտուղն են ազգերի, ժողովուրդների հաղթանակները, նվաճումները, սխրագործություններն ու բարի իրագործումները կոփող անհատները, որոնք լավագույն օրինակներ են սիրո, նվիրումի ու զոհողության: Կայուն և ամուր ընտանիքը ազգի գոյապահպանման հիմքն է: Հասարակությունը և նրա յուրաքանչյուր անդամ պետք է ունենա մտավոր հասունություն և պատրաստակամություն՝ սրբությամբ և մաքրությամբ պահելու ամուսնական միավորման ուխտը: Հասարակությունը բաղկացած է բազմաթիվ ընտանիքներից, որոնք էական նշանակություն ունեն կյանքի առաջընթացի, ազգային դիմագծի ու ավանդույթների պահպանման հարցում: Ընտանիք կազմելով՝ անձը պատասխանատվություն է կրում ոչ միայն հարազատների, ընտանիքի անդամների ու երեխաների նկատմամբ, այլև մարդկություն կոչվող մեծ ընտանիքի և Աստծու առջև: Ընտանեկան դաստիարակության առանձնահատկության հիմքում երեխայի նկատմամբ ծնողի զգացական անվերապահ ինքնայրում սերն ու զոհաբերվող նվիրումն են և մանկան փոխադարձ զգացմունքը:

Դաստիարակությունը, նպատակասլաց գործընթաց լինելով, ուղղված է անհատին դարձնելու բազմակողմանի զարգացած և հասարակությանը պիտանի անձ: Այն նաև կյանք է, որն ուսուցանում է ինչպես ապրել ու ապրեցնել, ուստի այստեղ կարևոր դեր ունի անձնական օրինակը:

«Կրոնական դաստիարակությունը պետք է անձնադրոշմ լինի, որ անձնակերտողական դառնա»,- ասում է Գարեգին Ա երջանկահիշատակ Հայրապետը:

Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործընթացն է, ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում: Այս ամենը պահանջում է կամք, հանձնառություն, պատասխանատվություն և համբերատարություն: Երեխան պետք է դաստիարակվի հետևողականորեն, կազմակերպված: Նա պետք է մե-

ծանա կարգապահության պայմաններում, մինչև այն տարիքը, երբ ինքը հոգով ու մտքով գիտակցի և այնուհետև կարողանա ինքն իրեն վերահսկել ու կառավարել: Երեխաները մեծերի պես ունեն իրենց աշխարհը, իրենց հոգսերն ու ուրախությունները, յուրովի պատկերացումները կյանքի, մարդկանց մասին: Այդ պատկերների ձևավորման առաջին օգնականն ընտանիքն է: Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստավոր պայմաններ է ապահովում իբրև քրիստոնյա նրանց բարոյական, անձնային որակների ձևավորման համար:

Երեխան, իբրև անձ, կայանում է՝ ապրելով հասարակական միջավայրում, որի կայուն ձևը քրիստոնեական ընտանիքն է: Ծնողական ջերմ ու հոգատար վերաբերմունքը խթանում է մանկան անհատականությունը, հուզական աշխարհի ու կամքի զարգացումը, ձևավորում է լայն մտահորիզոն, ստեղծագործական ունակություններ, ազնվություն, կարգապահություն, սեր բնության, արվեստի նկատմաբ, հարգանք մեծերի հանդեպ, ճանաչողական պահանջմունքներ: Ծնողները խնդիր ունեն զարգացնել իրենց երեխայի մեջ առողջ հոգևոր պահանջմունքներ, որը հնարավոր է միայն առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պայմաններում: Երեխայի աշխարհայացքի և առողջ հոգեբանության ձևավորման հիմքը ծնողների սկզբունքայնությունն է, որը համեմված է երեխաների նկատմամբ հարգանքով և մարդասիրությամբ՝ օրինակ ունենալով Աստծու հայրական վերաբերմունքը:

Այսօր քրիստոնեական ընտանիքն, ավելի քան երբեք, պետք ունի առողջ դաստիարակությամբ և անցյալից եկող սրբազան ժառանգությամբ ինքնիրեն զորացնելու, կերպարանափոխելու, որպեսզի կարողանա իբրև կենդանի աղբյուր՝ առողջ հոգևոր և ազգային սնունդ մատակարարել նոր սերնդին: Ուստի առողջ քրիստոնյա ընտանիքը Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու շարունակականության հիմնասյուներից մեկն է:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հայ ընտանիքը, հայ օջախը փոքրիկ Հայաստան է, որտեղ հայ զավակի նկարագրի ձևավորման սրբազան գործընթացն ուղղորդվում է աղոթքով և եկեղեցական-ազգային հոգենորոգ արարողություններով: Հետևաբար խոսել հայկական ընտանիքի՝ յուրաքանչյուր հայորդու կյանքում ունեցած անփոխարինելի դերի մասին հնարավոր է միայն քրիստոնեական եկեղեցու աստվածատուր արժեհամակարգի լույսի ներքո: Անդրժելի է Հայ Եկեղեցու կենսատու ազդեցությունը հայ ժողովրդի ամենափոքր, միաժամանակ ամենակարևոր միավորի՝ ընտանիքի ձևավորման գործում:

Քրիստոնեական արժեքները երբեք չեն անտեսվել հայ ժողովրդի կյանքում: Անշուշտ, եղել են ժամանակներ, երբ դրանք հնարավորություն են ունեցել արտահայտվելու առավել կամ նվազ չափով՝ պահպանելով և պաշտպանելով կերտված նահապետական սրբությունները հայի ներաշխարհում:

Հայ ընտանիքի ավանդույթները, սովորույթներն ու կենցաղային նիստն ու կացն իրենց կատարելությանն են հասել քրիստոնեության սրբագործող պատվիրանների լույսի ազդեցությամբ: Այսպիսով, հայ ընտանիքում քրիստոնեական արժեհամակարգի հաստատմամբ և այդ ազնվացնող օրենքների կենսագործմամբ ընտանեկան հարկը դառնում է այն ներդաշնակ ու տաքուկ օջախը, որտեղ սիրո մթնոլորտում երջանկանում են ամուսինները և ընտանիքը վերածում դրախտավայրի:

Երկուսը մեկ մարմին պիտի լինեն...

Ընտանիքի ձևավորման առաջին փուլը ներառում է երկուսի՝ տղամարդու և կնոջ միությունը: Ծննդոց գրքում կարդում ենք. *«Տեր Աստված ասաց՝ Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար: ...Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց և նրան բերեց Ադամի մոտ: Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ*

մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց» (Ծննդ. 2. 18, 22-24): Աստված Եվային տվեց Ադամին և օրհնեց նրանց՝ «Աճեցե՛ք և բազմացե՛ք…» պագամով (Ծննդ. 1.28-29):

Առաջին ամուսնական միությունը լի է տղամարդուն դեպի կին մղող սիրով: Աստված Ադամին տվել էր բացարձա՛կ սիրելու ընդունակություն, որով Ադամի սերը տարածվում էր ամբողջ արարչության վրա: Այս զգացումով հանդերձ, Ադամն արարածներից չընտրեց իրեն օգնական, այլ ուզեց տեսնել իրեն ծանոթ, իր նման մի էակի: Ուրեմն Ադամի՝ Եվային միանալու գաղափարը բխում էր նրանից, որ տղամարդն իր կնոջ մեջ տեսնում էր իր նմանին: Այս իրողությունից ելնելով է, որ Ադամն Աստծուն ասաց. «…այս ոսկոր է իմ ոսկրերից և մարմին իմ մարմնից… »: Տեսնում էր Ադամն իրեն և հասկանում էր, որ իր կողից ստեղծվածն իր մի մասն է, կողակիցը: Բայց այդ մտածումների մեջ չէր կարողանում ճիշտ տեսնել պատճառն այդ զգացողության, քանի որ նկատում էր լոկ ֆիզիկական ներկայությունը՝ ոսկորի և մարմնի տեսքով: Իսկ Եվան Ադամի պես ուներ աստվածատուր բանական հոգի: Սա էր երկուսի միության հիմնաքարը, ինչի արդյունքում Ադամը սիրեց Եվային այնպես, ինչպես կսիրեր իր անձը, և ինչպես սիրեց Տեր Հիսուս Քրիստոս իր Եկեղեցին: Այդ զգացումն Աստծու մեծագույն պարգևն է բոլորիս՝ որպես արժանի հաջորդներ նախածնողների, ովքեր հոգևոր աչքերով նայեցին իրենց մերկությանը: Այս է քրիստոնեական ընտանիքի առաջին սկզբունքը՝ վայելել Աստծու հարատև ներկայություն, որի մեջ փարատվում են կեղծիքի և ամոթի զգացումները՝ տեղի տալով աստվածային սիրո իշխանությանը:

Այդ սերը տրվեց բոլոր ազգերին, բոլոր ընտանիքներին, սակայն, ի տարբերություն բոլորի, քրիստոնյաներիս տրվեց ճանաչելու այդ սիրո Սկզբնաղբյուրին, Ով մարմին առավ և բնակվեց մեր մեջ: Ուրեմն՝ մարմնավորված սիրո ներկայությունն է, որ Սուրբ Պսակի խորհրդի պահին վկայվում է զույգերի հարազատների, բարեկամների, երկնային զորքերի և սրբոց դասի կողմից: Բայց նախապես այդ միությունը ճանաչում է նրանց միավորող Աստված.

«Այլևս երկու չեն, այլ մեկ մարմին: Ուրեմն որևէ մեկը թող չբաժանի նրանց, ում Աստված է միացրել» (Մատթ. 19.6): Երկուսը՝ մեկ մարմին, երկու հոգի կենցաղավարում են ինչպես մեկը, հետևաբար՝ երկու կամք և մեկ արտահայտություն՝ փոխհամաձայնության, վստահության, ներողամտության, խոնարհության և, իհարկե, հավատի ու սիրո սրբազան զգացումների մեջ: Այս է պսակի և ամուսնության կատարելության հաջորդ պայմանը: Այս ամենը դրոշմված է եղել հայ ընտանիքի կենցաղում: Տեր և հնազանդ լինելով և սուրբգրային պատգամի իրագործումով է ամրացել և զորացել քրիստոնեական հայ ընտանիքը: Միմյանց սիրելուց ոչ պակաս սեր և հնազանդություն է ցուցաբերվել աստվածային պատվիրանների ու պատգամների նկատմամբ, քանի որ ամուսնացողները հասկացել և ընդունել են այն ահռելի պատասխանատվությունը, որ Աստված տվել է նրանց իբրև ծնողներ և դաստիարակիչներ, այլապես հայ ընտանիքում և, առհասարակ, քրիստոնեական յուրաքանչյուր ընտանիքում հոգևոր և բարոյական մահ կտիրեր:

Հայկական հին սովորույթների համաձայն՝ դեռևս պատանի տարիքից են նշանադրել դեռահասներին՝ անտեսելով նրանց պատրաստությունն ու կյանքի փորձություններին դիմակայելու հասունությունը: Սակայն միաժամանակ զգացվել է ծնողների հարատև ներկայությունն ու հոգատարությունը, ինչպես նաև իրատեսական և զգալի է եղել Աստծու՝ որպես խնամող և սիրող ծնողի ներկայությունը, ինչի շնորհիվ նորաստեղծ ընտանիքում փթթել է սերն ու վստահությունը, փոխադարձ հասկացողությունն ու ներողամտությունը:

Այսօր այլ է իրավիճակը: Որոշ երիտասարդ զույգեր ցանկանում են պսակվել Հայ Եկեղեցու կանոններով, բայց ցանկություն չունեն ապրելու այդ կանոնների համաձայն: Սուրբ Խորանի առջև խոստանում են սիրել մինչև մահ, բայց հրաժարվում են խոստացյալից անգամ ընտանեկան ամենափոքր միջադեպի արդյունքում: Որոշ հայկական ընտանիքներում չկա փոխադարձ հանդուրժողականու-

թյուն և վստահություն, տիրում է եսակենտրոնությունը, որ թյուրիմացաբար որոշ երիտասարդներ համարում են «ազատ ապրելակերպ»: Ազատ է այն ապրելակերպը, որ հագեցած է սիրով և վստահությամբ, ընկերոջ կամ զույգի կատարած ընտրության նկատմամբ հարգանքով և հասկացողությամբ: Այսպիսի վերաբերմունք զույգերի միջև հնարավոր է միայն Սուրբ Հոգու միջնորդությամբ: «Եթե Տերը չի կառուցում տունը, իզուր են հոգնում այն շինողները…», Աստծու Հոգու շնորհները գործում են ոչ միայն քահանայի աղոթքի ժամանակ, այլ առավելաբար այն պահից, երբ երկուսը մեկ դարձած ապրում են Սուրբ Գրքի փրկաբեր պատգամով և եկեղեցական մաքրագործող կանոններով: Հայը պետք է իր նախնյաց նմանությամբ հավատարիմ լինի ազգային սրբություններին, ընտանիքի գաղափարը շարունակի պահել սրբությամբ: Ամուսնության մյուս կարևոր պայմանն է վստահությունը և աստվածային լույսի ներքո ճիշտ և արժանվույն գնահատականը ընտանիքին և նրա յուրաքանչյուր անդամին: Աստծու ներկայությունը, փոխադարձ սերն ու ներողամտությունը, վստահությունն ու արժանվույն մոտեցումը կատարյալ երջանկության սկիզբ կդնեն և մշտաբորբ ջերմության մեջ կպահեն ամեն մի նորաստեղծ ընտանիքի:

Ծնողների և զավակների փոխհարաբերությունները:

«Ինձ համար չկա ավելի մեծ ուրախություն, քան լսել, որ իմ որդյակներն ապրում են ճշմարիտ հավատի համաձայն» (3 Հովհ. 4): Յուրաքանչյուր ծնող ուզում է իր զավակին տեսնել իր պատկերացրած կատարելության մեջ: Ծնողական այս մոտեցումը բնական է, սակայն տարբեր ազգերի և տարբեր հավատք ունեցող ծնողների մոտ նույնը չեն այդ հատկության իրականացման կերպերը: Քրիստոնեական ընտանիքներում, մյուս բոլոր ընտանիքների պես, դաստիարարակության մոտեցումները ձևավորվում են սոցիալական, հասարակական, կրթական, մշակութային, տնտեսական և քաղաքական իրավիճակների հիման վրա: Սակայն անփոփոխ են մնում քրիստոսավանդ պատգամները: Անհրաժեշտ է

նախևառաջ, որ երեխայի դաստիարակությունը համապատասխանի Աստծու կամքին. չէ՞ որ մայրական սիրուց առավել Տիրոջ սերն է իր զավակի հանդեպ, որին կյանք է տվել և մեծացրել դեռևս իր մոր որովայնից, որի խնամքն իրականացրել է ոչ միայն մարմնեղեն մոր, այլև հոգեղեն հրեշտակների միջոցով: Այս կամքն ու հոգատարությունն է հաղորդել Հայ Եկեղեցին իր զավակներին՝ որպես ազգ և ընտանիք ձևավորելու գործընթացում, ինչի շնորհիվ ստացել է *ազգային եկեղեցի* կոչմանը: Եթե ընդունենք, որ քրիստոնեական այլ երկրներում նույնպես քրիստոնեության արժեքը սուրբգրային պատգամի իրագործման մեջ է, ապա հայ ընտանիքում սուրբգրային խոսքի արժեքը չի տարանջատվում ազգային արժեքներից:

Այսօր աշխարհի թոհուբոհի և արագ ընթացքի մեջ հաճախ երկրորդական են դիտվում քրիստոնեական արժեքները: Պատճառն, ըստ էության, ծնողների հարասլաց աշխատանքային վազքն է և նյութական բարեկեցության ձգտումը: Հայաստանում այս երևույթը վերաձևավորվելով հարմարվել է մեր սոցիալական և տնտեսական հնարավորություններին: Այսօր խառնվել են հայրական և մայրական պարտավորություններն ու իրավունքները, հաճախ հոր բացակայությունն ստիպում է մորը ստանձնել հայրական դեր և իրականացնել այն յուրովի՝ հանուն ընտանիքի պահպանման՝ համոզելով թե՛ իրեն և թե՛ իր զավակներին, որ ստեղծված կարգավիճակը «բնական և սովորական» է: Որոշ ծնողների անտարբերությունն ու «ժամանակ չունենալը» բարձիթողի վիճակի են հասցնում երեխայի դաստիարակության ընթացքը՝ վնասելով ներընտանեկան միությանն ու երկկողմանի վստահությանը: Այն, ինչ անաստվածության տարիներին տվել են հայ մայրերն ու հայրերն իրենց զավակներին, հաճախ առողջ բարոյական ու հոգևոր նորմերից շեղվել են, քանի որ այդ զգացումը սնուցող հավատ և սեր չեն ունեցել առ Աստված: Սրա հետևանքով է նաև, որ այսօր հասարակության մեջ կան դաստիարակչական բազմաթիվ եղանակներ, որոնք զանազան կրոնական կազմակերպությունների խեղող գործունեությանը

զուգահեռ՝ ի վերջո այն վիճակն են ստեղծում, որպեսզի հայ ծնողը մոռանա դարերի ընթացքին փորձված և թրծված քրիստոնեական դաստիարակության ազգապահպան դերը: Արդյունքում զավակները զրկվում են այն հայրենավանդ հաջորդականությունից, որ պահվում և զորացվում է հայակերտ արժեքներով: Ծնողների համար գերնպատակ պետք է լինի զանազան եղանակներով իրենց զավակներին հայկական մշակույթին և քրիստոնեական-եկեղեցական արժեքներին հաղորդակից դարձնելը: Սակայն մինչ այս, անհրաժեշտ է, որպեսզի ծնողներն իրենք ապրեն այդ արժեքներով՝ կյանքով օրինակ դառնալով զավակների համար, քանի որ երեխայի դաստիարակության բարդ գործում առավել կարևոր է երեխայի տեսողական հիշողությունը, քան զուտ խոսքային մոտեցումը:

Աստված Ադամին և Եվային տվեց այս աշխարհի վրա տեր և իշխան լինելու իրավունք: Երիտասարդ ծնողները պետք է անընդհատ հիշեն սա, քանի որ ընտանեկան յուրաքանչյուր դժվարություն հաղթահարվում է այդ ազնվական ոգով: Արդյունքում հայ զավակը կմեծանա ոչ թե ծառայի և կամ ուրիշից կախված լինելու գաղափարով, այլ որպես իշխանազուն ժառանգ իրեն վստահված բանավոր տնտեսության և պատրաստ՝ անմնացորդ նվիրվելու, սիրելու և հոգ տանելու իր նմանի նկատմամբ:

Հայ ընտանիքում հեղինակություն պետք է լինեն ավագ սերնդի ներկայացուցիչները, որոնց ազնիվ գործերն ու բարի հիշատակ դարձած պատմությունները պետք է ուսուցողական օրինակներ լինեն հայորդիների համար: «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Աստված տալու է քեզ» (Ելք 20.12): Այս սկզբունքով է դաստիարակվել հայն իր վարժարաններում, դպրոցներում և կրթական այլ հաստատություններում: Այս գիտակցությամբ և օրինապահությամբ է զավակը նայել իր ծնողին: Փառք Աստծու, ավանդությունը վերաշարունակվում է նաև այսօր. մեր դպրոցներն ու ուսումնական հաստատություններն այսօր հնարավորություն ունեն, թեկուզ և նվազագույն չափով, տալ քրիստոնեական այն դաստիարակությունը,

որը նպաստում է հային ճանաչել իր Եկեղեցու պատմությունը, իր նախնյաց հերոսությունները՝ շաղախված քրիստոնեական անկոտրում ոգով և ազնիվ մղումով:

Այնուամենայնիվ, շատ երիտասարդ զույգերի համար այսօր ժամանակավրեպ է թվում դաստիարակչական ավանդական եղանակը, ինչի արդյունքը, կամա, թե ակամա, անդունդ է ստեղծում անցյալի և ապագայի միջև: Պատճառը թերևս պարզ է և որոշակիորեն ընդունելի: Հարցն այն է, որ այսօր ոչ թե ժամանակակից տեխնիկան է վնասում ճիշտ դաստիարակությանն ու ընտանեկան հարաբերություններին, այլ այդ ամենը կիրառելու ընդունակության պակասը, որ պատճառ է ծնողների՝ ժամանակի հետ համընթաց չքայլելուն: Ավանդական արժեքներն ու նախորդների մոտ ստեղծված գեղեցիկ սովորույթները կարելի է և անհրաժեշտ է մատուցել գալիք սերնդին՝ ժամանակի շնչով և պահանջներով շաղախված: Միայն այս դեպքում է, որ ընտանիքի երեխան պիտի կարողանա հասկանալ, որ իր նախնիների՝ պայքարի և արյան գնով պահպանված և իրեն հասած քրիստոնեական-ազգային կենցաղավարությունը միշտ եղել է ժամանակի և հասարակության պահանջներին համահունչ, որ բացվել և ներկայացել է իր անբեկանելի ու արդիական պատգամներով՝ հոգուտ ազգի և տեսակի պահպանման և բարգավաճման:

Ուրեմն՝ ծնողների պարտականությունն է աստվածահաճո մոտեցմամբ կիրառել առկա բոլոր դաստիարակչական միջոցները՝ զավակներին մատուցելու համար քրիստոնեության հավիտենական սերն ու մարդկային ազնիվ տեսակը, քանի որ սիրո և Աստծու հաղորդության մեջ հալչում է յուրաքանչյուր անլուծելի թվացող խնդիր: Իսկ այդ հաղորդության համար պետք է ծնողներն այդ արժեքների կրողներն ու օրինակը լինեն: Սերունդների փոխհարաբերություններում չեն կարող լինել դժվարություններ, եթե յուրաքանչյուր սերունդ գիտակցում է ժամանակն ու դրա կարևորությունը և միաժամանակ կարևորում է և մտահոգվում դիմացինի ճիշտ ապրելակերպով: Սրանով է արդիականացվում ազգային-կրոնա-

կան դաստիարակչական եղանակը, ստեղծվում է հայրերին որդիներին միացնող հաստատուն և մնայուն մի խողովակ, որի օգնությամբ հայկական գեղեցիկ ավանդույթներն ու արարողությունները որպես ճշմարիտ կյանքի առհավատչյա են մատուցվում գալիք սերունդներին՝ հայկականության կերտման և հայապահպանության կայացման մեջ:

Քրիստոնեական արժեքների դերին ու նշանակությանը մեր անդրադարձը թերևս մակերեսային է՝ համեմատած այն հրատապ հարցերի վերլուծության հետ, որոնք կոչված են ամբողջացնելու և կատարելագործելու հայ ընտանիքն ու հայրենի երկիրը՝ ի նպաստ նրա ծաղկման և զորացման: Այս մեծ առաքելության մեջ Հայ Եկեղեցին շարունակում է մատուցել իր քրիստոսատիպ հայակերտման անփոխարինելի ծառայությունը, որով ամբողջ աշխարհը ճանաչելու է աստվածաշնորհ ընտանիքի ամրությունն ու աստվածակենտրոն հայ ժողովրդի հավիտենությունը:

Ժամանակները փոխվում են, փոխվում են մարդկային հայացքներն ու կյանքի հանդեպ ունեցած մոտեցումները, սակայն մնում է հավիտենական Աստծու բացարձակ սիրո վրա հիմնված ընտանիքն ու երկիրը:

Ուստի նորոգենք մեր ուխտը հինկտակարանյան Սիրաք մարգարեի պատգամով, քան որ *«Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը, նա ամոթ և նախատինք է իր պապերի համար և մի նոր անեծք»* (Սիրաք 20.28):

ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ավետարանում պատմվում է, որ երբ Տիրոջը մի առիթով անվանեցին բարի, Նա անմիջապես շտկեց զրուցակցին՝ ասելով, որ Բարի է միմիայն Աստված (հմմտ. Մարկ.10.18):

Մարդկային տեսակների քանակով կարելի է նաև բարու բազմաթիվ սահմանումների հանդիպել: Դրա համար կարևորվում է բարու չափանիշը, որ մատուցում է Սուրբ Գիրքը: Անհատի, ընտանիքի և հասարակության կենցաղում բարու արտահայտման կերպերը կարող են տարբեր լինել: Բոլորովին այլ է հարաբերությունը բացարձակ Բարու՝ Աստծու հետ: Ուրեմն՝ գերագույն բարեպաշտությունը Աստվածապաշտություն է, և բարեպաշտական սովորություններն էլ Աստծու հետ հարաբերության մի երեսն են:

Չափազանց կարևոր է հոգևոր-բարեպաշտական սովորությունների գործածությունը քրիստոնեական ընտանիքում: Լինելով մանրակերտը Քրիստոսի Եկեղեցու՝ ընտանիքը քրիստոնեական արժեքների, ավանդության, հոգևոր-բարեպաշտական սովորությունների կրողն ու պահպանողը պետք է լինի, որպեսզի ամուր դառնա երկիրը, և կատարյալ լինի Եկեղեցին՝ Քրիստոսի մեծ ընտանիքը:

Հոգևոր-բարեպաշտական սովորությունների առկայությունն ընտանիքում ինքնանպատակ չէ: Հայր Աստված, լինելով բազմագութ, ամենողորմ ու մարդասեր, մեր փրկության համար ուղարկեց Իր Միածին Որդուն (հմմտ. Հովհ. 3.16), Ով մարդկությանն ավանդեց իրական ճշմարտությունները, որոնք քարոզվեցին Նրա սուրբ առաքյալների կողմից, պահպանվեցին մեր Եկեղեցու սուրբ Հայրերի կողմից և իբրև կտակ ու ժառանգություն՝ փոխանցվեցին մեզ: Ուրեմն հոգևոր-բարեպաշտական մեր հայրենավանդ սովորությունները կյանքի կոչելու, դրանցով ապրելու և դրանց միջոցով երկնային շնորհների ու Աստծու օրհնությանն արժանանալու հորդորները Եկեղեցու պարտադրանքը չեն սուրբ Եկեղեցու զավակներին, հատկապես հայ ընտանիքներին, այլ դարեր շարունակ մեր

հայրերի ու պապերի հավատարմության ու վստահության արտահայտությունն են առ Աստվածային ճշմարտություններ:

Ըստ Սուրբ Մատթեոս Ավետարանչի՝ մեր Տերն այպանում էր այն հրեաներին, ովքեր ավանդության ոչ ճիշտ կիրառման պատճառով հաճախ արհամարհում էին աստվածադիր պատվիրանները, իսկ փոխարենը պահպանում էին իրենց հնարած ավանդությունները (տե՛ս Մատթ. 15.6): Այսօր էլ որոշ մոլորված և ճշմարտությունից հեռացած այլադավան հոսանքներ, հիշյալ ավետարանական դրվագները մեջբերելով, հատուկ փորձում են Քրիստոսի Եկեղեցու կողմից քաջալերվող շատ ու շատ հոգևոր-բարեպաշտական սովորություններ, դիտմամբ հիշյալ պիտակներով ներկայացնելով, իրենց հետևորդներին մատուցել խեղաթյուրված ու մասնավոր կերպով աղճատված բովանդակությամբ:

Լուրջ տարբերություն կա ավետարանում քննադատված հրեական ավանդույթների և մեր ազգային-եկեղեցական կյանքում եղած հոգևոր սովորությունների կամ ավանդությունների կիրառման միջև: Տիրոջ քննադատությանն արժանացած ավանդությունները մարդկային գործոնի ու հեղինակության արդյունք էին, իսկ Եկեղեցու համայնքային կյանքում շարունակաբար առկա՝ տերունավանդ ու աստվածպարգև շնորհներին արժանանալու միջոց: Սուրբ Գիրքը բազմիցս կոչ է անում քրիստոնյաներին՝ հնազանդ մնալու ու սրբությամբ պահպանելու առաքյալների փոխանցած ավանդությունները, ինչպես օրինակ Կորնթոսի համայնքին ուղղված Պողոս առաքյալի նամակը. *«Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում և պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ»* (Ա Կորնթ. 11.2), կամ *«Ո՛վ Տիմոթէոս, պահի՛ր աւանդը՝ հեռու մնալով պիղծ և նորահնար խօսքերից, հակառակութիւնից և խաբեպատիր գիտութիւնից»* (Ա Տիմ. 6-20), կամ էլ *«Պահի՛ր բարի աւանդը մեր մէջ բնակուող Սուրբ Հոգու միջոցով»* (Բ Տիմ. 1.14): Սուրբ առաքյալի հիշյալ պատգամները այժմեական են նույն չափով. *«Եւ ինչ որ լսեցիր ինձնից բազում վկաներով, աւանդի՛ր այն հաւատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին էլ ուսուցանել»* (Բ Տիմ. 2.2):

Հոգևոր-բարեպաշտական արարողությունները կոչված են աշխույժ և մշտարթուն պահելու անհատի, ընտանիքի, ամբողջ համայնքի հավատքային կապն Աստծու, եկեղեցու և հոգևոր հովվի հետ՝ նաև ներհամայնքային հոգևոր հաղորդակցություն ապահովելով համայնքի ներսում:

ՏՆՕՐՀՆԵՔ: Հայ ժողովրդի և հայ ընտանիքի հոգևոր կյանքում իր առանձնահատուկ տեղն ունի Տնօրհնեքի արարողությունը: Տան օրհնությունից ճառագող ու մեր կյանքը լուսավորող աստվածային լույսը ոչ միայն մեր տներում կամ բնակարաններում է հանգչում, այլև մեր ընտանյաց անդամների անձերում: Տնօրհնեքը մեր ընտանիքների օրհնության կարգն է:

Հայ Եկեղեցու քահանաների կողմից կատարվող ծիսական սրբազան արարողությունների ձեռնարկում՝ Փոքր Մաշտոցում, տարվա մեջ երկու Տնօրհնեք կատարելու թելադրություն կա, որոնցից մեկը կատարվում է Սուրբ Ծննդյան տոներից հետո՝ 8 օրերի ընթացքում, և կոչվում է «Տնօրհնէք ի Սուրբ Ծննդեան», իսկ մյուսը՝ Տիրոջ Հրաշափառ Հարության տոնից հետո՝ 50 օրերի ընթացքում: Այն կոչվում է «Տնօրհնէք ի Սուրբ Զատկի»:

Տուն օրհնելու սովորությունը քրիստոնեական կենցաղավարության մեջ մտավ Տիրոջ տնօրինությամբ: Նա ծնվեց քարայրում կամ, ինչպես «Խորհուրդ մեծ» շարականի հեղինակ Մովսես եպիսկոպոս Խորենացին է ասում, «ի սուրբ այրին բազմեցաւ», որով քրիստոնյաներս, սկսած առաջին դարից, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոների առիթով հոգևորական ենք հրավիրում մեր տուն՝ Տիրոջ օրհնության շնորհաշատ խինդով ու բերկրանքով լցնելու մեր ընտանեկան հարկը:

Եթե Սուրբ Ծննդյան տոնին մեր Տերն Իր շնորհաբաշխ Ծնունդով նորից ծնեց մեզ և Սուրբ Ծննդյան ավետալի խնդությանն արժանացնելով ու մեր նախահոր անեծքը վերացնելով՝ նորոգեց վերստին մեզ լուսաբնակ սրբերի վիճակին հասնելու և Աստծու շնորհին արժանանալու հնարավորությունը, ապա Սուրբ Հարության տոնին մեր Փրկիչ Տերը բարձրացրեց մարդուն առ Աստված,

քանդեց մահվան կապանքները: Սրանով ի չիք դարձրեց մահվան երկյուղն ու նրա պատճառելիք վնասներն ու հետևանքները՝ Իր փրկարար շնորհներով ու հուսադրությամբ ամրացնելով մեր մարմինները, սրտերն ու հոգիները:

Քաղաքակրթությունը, իր հսկայական մտավոր և տեխնիկական առաջնընթացներին զուգահեռ, մատուցում է հոռի և ուռճացված բարքերի վնասակար մոդելներ: Աշխարհի Փրկիչը ծնվեց քարայրի մեջ՝ անգամ ամենահետին պայմաններում ծնված և ապրող մարդուն հույս ներշնչելով, վերադարձնելով մարդու աստվածային անբասիր նկարագիրն ու անմեղ կենցաղավարության դիմագիծը:

Ադամի ու Եվայի մեղանչումից առաջ մեր տունն ու բնակատեղին Դրախտն էր: Տեր Հիսուս Քրիստոս վերադարձրեց մեզ դրախտը՝ Աստծու ներկայության ճշմարիտ վիճակը, և մենք, օրհնելով մեր բնակարանները, Տիրոջ ներկայությունն ենք վերականգնում մեր տներում և մեր ընտանիքներում, որպեսզի Քրիստոսի սուրբ Աջը հովանի լինի մեզ վրա «ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի հառնել», ինչպես բնորոշում է սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը, որպեսզի երբեք չսասանվենք:

Տնօրինեքի արարողության ժամանակ քահանան օրհնում է օջախի կենսագործունեության համար անհրաժեշտ աղը, հացը և ջուրը: Մեզ շրջապատող իրերը, առարկաներն ու պարագաներն օրհնելով՝ նախ և առաջ օրհնվում են դրանց օգտագործող անձինք, քանի որ ամեն բան, ինչ ստեղծել է մեր Արարիչ Աստված, մեր մարմինների ու հոգիների փրկության համար է: Աստվածաշունչն էլ վկայում է, որ մեր Երկնավոր Հայրը, 6 օրերի ընթացքում ոչնչից գոյացնելով ողջ արարչությունը, օրհնեց մարդու համար ստեղծած ամեն բան (հմմտ. Ծննդ.1.28):

ՄԱՏԱՂ: Ըստ մեր Եկեղեցու եռամեծ վարդապետներից սուրբ Գրիգոր Տաթևացու՝ «մատաղ» նշանակում է «աղ մատուցանել», այսինքն՝ մարդկության գոյության ու կենսունակության ապահովման կարևոր բաղադրիչ աղը քահանային մոտեցնելու և օրհնելու

արարողություն: Այս արարողությունը նախ և առաջ գոհություն և շնորհակալություն է Աստծուն՝ մեզ պահպանելու, այս կամ այն փորձության միջով անցկացնելու և Իր ապահովության ու հովանավորության ներքո պահելու համար:

Դեռևս մարդկության երկրորդ նախահայրը՝ Նոյ նահապետը, իր ընտանիքի հետ ջրհեղեղյան փորձությունների միջով անցնելուց հետո զոհ մատուցեց Աստծուն՝ ի նշան շնորհակալության և գոհության: Ընթերցենք սուրբգրային այդ դրվագը. «Նոյը զոհասեղան շինեց Աստծու համար: Նա առավ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի անպիղծ թռչուններից և ողջակիզեց զոհասեղանի վրայ: Եւ Տէր Աստուած հոտոտեց անուշ բոյրը: Տէր Աստուած իր մտքում ասաց. *«Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլևս չեմ անիծի, որովհետև մարդկանց միտքը մանկուց չարի ծառայութեան մէջ է: Ես այլևս ոչ մի կենդանի էակի չեմ պատուհասի, ինչպէս արեցի: Այսուհետև, քանի դեռ կայ երկիրը, թող չդադարեն սերմն ու հունձը, ցուրտն ու տօթը, ամառն ու գարունը, ցերեկն ու գիշերը»* (Ծննդ. 8.20-22):

Ուրեմն՝ որքան լավ է, որ մեր Հայ Եկեղեցու զավակներն էլ Նոյ նահապետի օրինակով իրենց շնորհակալության «սեղանն» են կանգնեցնում Աստծու համար և իրենց որդիական երախտագիտության «անուշահոտությունը» հասցնելով առ Աստված՝ նորոգում են Նոյ նահապետի ուխտն Ամենակալի հետ:

Մատաղ կատարելու սովորությունը մեր ժողովրդի մեջ յուրահատուկ ավանդական ընթացակարգ ունի: Դեռ հին ժամանակներից մեր հայրերը Աստծուն գոհություն և շնորհակալություն հայտնելու ամենալավ տարբերակ են համարել աղքատներին բարեգործություն անելը: Ուրեմն՝ այստեղից առաջանում է մատաղ անելու երկրորդ նպատակը: Մատաղն այսպիսով նաև «աղքատաց կերակուր է», ինչպես Առակաց գրքում է ասվում. «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան» (Առակ.19.17): Հնում մատաղ անող ընտանիքը մատաղն ամբողջությամբ բաժանել է և չի ճաշակել դրանից:

Մեր ժամանակներում մատաղ անելու սովորույթը վերոնշյալ իմաստից փոքր-ինչ փոփոխվել է: Մատաղ անող ընտանիքը մատաղից բաժանում է յոթ տուն, իսկ մնացյալով սիրո սեղանի շուրջ հավաքում է հարազատներին՝ ճաշակելու և Աստծուն ընդունելի ուխտ լինելու մաղթանքով: Սակայն այս սիրո մթնոլորտը գինարբուքի և անախորժ միջավայրի վերածելը խոտելի է և մերժելի:

ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ: Դեռևս առաջին դարերից քրիստոնյաները մոմավառություն են կատարել ոչ միայն ծիսական նկատառումներից ելնելով, այլև այն եղել է գործնական-կիրառական կյանքի մի մաս: Առաքելական դարաշրջանում հալածական քրիստոնյաները միասնաբար աղոթելու, հացը բեկանելու և Տիրոջ խորհուրդների մասին խոսելու և խորհրդածելու համար ստիպված են եղել գաղտնի հավաքվել ու իրենց հավաքատեղիներն էլ, որ մեծ մասամբ հաճախ եղել են քողարկված այրերը, գետնուղիները կամ կատակոմբները, լուսավորել են մոմերով կամ ճրագներով: Հետագայում, երբ քրիստոնեությունը պետության կողմից հռչակվում է թույլատելի կրոն, մոմավառությունը պահպանում է իր կիրառությունն ավանդական առաքելական եկեղեցիներում:

Մոմն Աստծու լույսի ու հոգևոր լուսավորության խորհուրդն ունի. *«Տէրն իմ լոյսն է ու կեանքը, ո՞ւմից վախենամ. Տէրն իմ կեանքի ապաւէնն է, ո՞ւմից ես դողամ»* (Սաղմ. 26.1):

Իսկ Սուրբ Ավետարանում մեր Ամենափրկիչ Տիրոջ կողմից լույս ենք անվանվում մենք՝ քրիստոնյաներս. «Դո՛ւք էք աշխարհի լոյսը. մի քաղաք, որ լերան վրայ է կանգնած, չի կարող թաքնուել: Եւ ճրագ վառելով կաթսայի տակ չեն դնում, այլ՝ աշտանակի վրայ, և նա լոյս է տալիս բոլոր նրանց, որ տան մէջ են: Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդկանց առաջ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» (Մատթ.5.14-16): Ուրեմն՝ աշտանակի վրա վառելով մեր մոմը՝ մենք հիշում ենք մեր Տիրոջ կողմից մեզ ավանդված շատ պատվելի ու հասարակությանն օգտակար դերակատարությունը՝ մեր քրիստոնական պարտականությունները, պատվիրանապահության և ապա ուսուցման, քարոզչության առաքելությունը և այլն: Մոմ վառելու սովորույթը, աղոթքի արտահայտություն լինելուց զատ, մեր օրերում ձեռք է բերել նաև Աստծու սուրբ տաճարին տվյալ անձի նյութական նվիրատվության գաղափար: Սա գեղեցիկ առիթ է, նվազագույն լուման ներդնելով, եկեղեցու առաքելությանը նպաստելու և մասնակցելու համար: Այդ պատճառով էլ խրախուսելի չէ գործող եկեղեցիներում այլ վայրերից բերված մոմ վառելը:

Քրիստոս Փրկչի օրինակով մոմը լույս տալով է սպառվում: Այդպես էլ մեր՝ քրիստոնյաներիս կոչման հանձնառությունը պետք է լինի անձնական բարի օրինակով լուսավորել մեր շրջապատը՝ վկայելով Աստծու ողորմությունների և Տիրոջ փրկչական գործունեության մասին:

«Դո՛ւ ես իմ ճրագը, Տե՛ր, և Դո՛ւ ես լուսավորելու իմ խավարը»,- ասում է Դավիթ մարգարեն (Բ Թագ. ԻԲ 29): Մոմ վառելով՝ քրիստոնյան իր կյանքում առկա դժվարությունների, անհաջողությունների, նեղությունների և փորձությունների լաբիրինթոսում փրկության լույսն է տեսնում՝ իբրև կյանքի արհավիրքների դեմ Աստծու օգնականության ու ներկայության հանդեպ անվերապահ հավատի ու վստահության նյութական արտահայտություն:

ՊԱՏԿԵՐԱՀԱՐԳՈՒԹՅՈՒՆ: Պատկերների կիրառությունը քրիստոնեական Եկեղեցում յուրահատուկ ավանդական հիմք ունի: Դեռևս աշխարհում առաջին քրիստոնյա թագավորի՝ Եդեսիայի հայոց Աբգար արքայի խնդրանքով մեր Տեր Հիսուս Քրիստոս ուղարկում է Իր անձեռագործ պատկերը, որը որոշ ժամանակ Եդեսիայում պահպանվելուց հետո ապաստանում է մի շարք երկրներում և վերջապես, սկսած 14-րդ դարի առաջին քառորդից՝ պահպանվում է Ջենովայի Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցում:

Հետագա դարերում, ինչպես մյուս քրիստոնական եկեղեցիներում, այնպես էլ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում, մեծ կիրառություն է գտնում սրբապատկերների նկատմամբ հարգանքը՝ իբրև հոգևոր-բարեպաշտական սովորություն: Ի տարբերություն մյուս ավանդական եկեղեցիների՝ Հայոց Եկեղեցին մշտապես պահպա-

նել է պատկերահարգության սովորույթը: 7-8-րդ դարերում պատկերամարտական և պատկերապաշտական թոհուբոհի միջից Հայ Եկեղեցին ամենակշռադատված ուղղությունը բռնեց՝ հռչակելով, որ Հայ Եկեղեցին ո՛չ պաշտում է սրբապատկերները, ո՛չ էլ մերժում պատկերների հանդեպ որևէ պաշտամունքային նկրտում, այլ հարգանքի տուրք է մատուցում:

Եռամեծ Վադապետ Սուրբ Գրիգոր Տաթևացին սրբապատկերները որոկում է որպես «անտեսանելին տեսանելիի մեջ», այսինքն՝ սրբապատկերը մեր հոգևոր-բարեպաշտական կյանքի առաջընթացին նպաստող երևույթ կարող է հանդիսանալ, քանզի սրբապատկերների վրա պատկերված սրբերը մեզ իրենց մարդկային օրինակով ամրացնում են մեր հավատքի և Աստծու հետ հաղորդակցության մեջ: Սրբապատկերների միջոցով մենք հոգեպես տրամադրվում ենք աղոթական վիճակին և խոնարհվելով ու համբուրելով՝ մեր հավատքի տուրքն ենք մատուցում Աստծուն:

Սրբապատկերների վրա պատկերված են լինում Փրկչի կյանքի զանազան խորհրդավոր դրվագներ. Աստվածածինը մանուկ Փրկչի հետ և Եկեղեցու կողմից սուրբ հռչակված վարդապետներ ու առաջնորդներ, հավատի վկաներ և նահատակներ: Մանուկ Փրկիչը՝ Սուրբ Աստվածածնի գրկում, դրվում է եկեղեցիների խորաններում՝ սուրբ Սեղանի վրա, և արժանի է երկրպագության, սակայն ոչ թե նյութը, այլ պատկերի մեջ արտացոլված Աստվածամարդը, որ Հայր Աստծու Աջ կողմում է և բարեխնամում է մեզ: Իսկ սրբերի պատկերներն արժանի են հարգական վերաբերմունքի և ոչ երբեք երկրպագության:

Ավելացնենք անպայման, որ Հայ Եկեղեցում սուրբ պատկերները կիրառվում են հոգևոր-բարեպաշտական նպատակներով միմիայն եպիսկոպոսի ձեռամբ օծվելուց հետո, իսկ հակառակ դեպքում՝ դրանց նկատմամբ պաշտամունքային որևէ արտահայտություն դիտվում է կռապաշտություն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ: Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ այս աշխարհում ապրող և չարի դեմ մարտնչող հավատացյալների եկեղեցին կոչվում է Զինվորյալ, իսկ ի Տեր ննջած հավատացյալները կազմում են Հաղթանակած եկեղեցին, որոնք անքակտելիորեն մաս են կազմում քրիստոնեական Եկեղեցու: Մահվանից հետո մարմինն ամփոփվում է հողի մեջ, իսկ հոգին սուրբ Հայրերի բնորոշմամբ ուղևորվում է դեպի արդարների կամ մեղավորների սպասակայան, որտեղ, սակայն, հոգիներն այլևս հնարավորություն չունեն իրենց չխոստովանած և թողության չարժանանացած մեղքերի համար զղջալու ու ապաշխարելու, քանի որ արդեն մարմնից դուրս են: Նրանց փոխարեն այդ պարտականությունը պետք է կատարենք ապրողներս, այն հավատով, որ ամենողորմ Աստված գթա և ահեղ դատաստանի օրը թեթևացնի ննջեցյալների պատիժները և թերևս արդարացնի նրանց: Ուրեմն՝ հոգեհանգստյան արարողության միջոցով իրականանում է Հաղթանակած և Զինվորյալ Եկեղեցու կապն ու միությունը:

Հայ Եկեղեցու սուրբ Հայրերը, բացի այն, որ օրինադրել են ննջեցյալներին հուղարկավորության՝ ուղի արկանելու, առ Աստված ճանապարհելու կարգը, նաև սահմանել են, որ ամեն Տաղավար տոների հաջորդ՝ Մեռելոցի օրը, նրանց հոգիների հանգստության համար Սուրբ Պատարագ և Հոգեհանգստյան կարգ կատարվի՝ պատարագիչ քահանայի կողմից հոգիների հանգստության համար արվող աղոթքի մեջ հիշատակելով ննջեցյալների անունները:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ա. ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

«Ազգերի զորությունը ընտանիքի մեջ է: Զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիք. սիրով, միությամբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ»

Մուրացան

Հայության պահպանման գործում հայ ընտանիքը մեծ դերակատարում է ունեցել: Պատմական տարբեր փուլերում այն ունեցել է այդ ժամանակաշրջանին հատուկ կուռ և տրամաբանական կառուցվածք: Դարեր շարունակ խիստ արդյունավետ է եղել դերային հստակ բաժանումով մեծ գերդաստան-ընտանիքը, որը միևնույն տնտեսության մեջ միավորել է մի քանի սերունդներ:

Այսօրվա իրողությունն այլ է՝ ընտանիքն ավելի փոքր է՝ հիմնականում կազմված ծնողներից և երեխաներից: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում ձևափոխվող հասարակությունում առաջացել են նոր երևույթներ: Ավելացել է այն տնտեսությունների թիվը, որոնք ղեկավարում են կանայք: Այսպես, ըստ ՀՀ վիճակագրական վարչության 2009 թ. տվյալների՝ այդպիսի ընտանիքների թիվն անցնում է 30%-ից: Պատճառները տարբեր են՝ արտագնա աշխատանքի հետևանքով ամուսնու բացակայությունը, երբեմն կնոջ ավելի մեծ եկամուտը, ամուսնալուծությունը և այլն: Քիչ չեն մեկ ծնողով ընտանիքները: Միայն մայր ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը կազմում է 1,7%, միայն հայր՝0,2%:

Սակայն նոր իրողություններն ազդում են ոչ միայն ընտանիքի կառուցվածքի, այլ նաև ներընտանեկան հարաբերությունների փոփոխման վրա: Սկսել են զարգանալ էգալիտար (հավասարական) հարաբերությունները: Փոփոխվում են նաև ամուսինների, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, գենդերային հավասարություն ընտանիքում դարձել է ժամանակի պահանջ:

Իսկ ի՞նչ է գենդերային հավասարությունը: Հասկանալու համար դա անդրադառնանք «գենդեր» տերմինին:

«Գենդեր» տերմինը վերաբերում է կանանց և տղամարդկանց սոցիալական, հոգեբանական և մշակութային բնութագրերին ու առանձնահատկություններին, հասարակության մեջ նրանց զբաղեցրած դիրքին և նրանցից ակնկալվող վարքի նորմերին: Գենդերը չի նույնանում սեռի հետ: Այն բացահայտում է ոչ թե սեռերի կենսաբանական և ֆիզիոլոգիական, այլ դրանց սոցիալական դերերի և կարգավիճակների, գործունեության ձևերի, վարքի և զգայական բնութագրերի տարբերությունները:

Մարդը ծնվում է որպես իգական կամ արական սեռի ներկայացուցիչ և հասարակության մեջ կերտվում որպես կին կամ տղամարդ: Այդ պատճառով հաճախ ասում են, որ գենդերը արարվում է սոցիալական գործունեության ընթացքում՝ ներառելով յուրաքանչյուր հասարակությանը հատուկ սոցիալական և մշակութային նորմեր, որոնք պարտադրվում են կանանց և տղամարդկանց, ստիպում նրանց կատարել որոշակի գենդերային դերեր:

Գենդերային դերերը հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ են: Կատարել այս կամ այն գենդերային դերը, նշանակում է ունենալ տղամարդուն կամ կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագնվելու ոճ, շարժուձև, խոսք, ստանձնել ընտանիքում և հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթ, ունենալ որոշակի սոցիալական կարգավիճակ և այլն:

Գենդերային դերերի հիմքում ընկած են գենդերային կարծրատիպերը՝ մշակույթում ընդհանրացված բավական կայուն պատկերացումները կանանց և տղամարդկանց և համապատասխանաբար նրանց վարքի վերաբերյալ:

Գենդերային կարծրատիպերի ներգործությամբ մշակվում են կենսակերպի չափորոշիչներ՝ գենդերային նորմեր: Դրանք վարքի որոշակի կանոններ են, որոնք պարտադրվում են մարդուն՝ կախված նրա կենսաբանական սեռից: Գենդերային նորմերը սերման-

վում են մանկուց, իսկ հետագայում ամրապնդվում զանազան սոցիալական և մշակութային մեխանիզմների միջոցով:

Ինչպես վերը նշեցինք, գենդերն արարվում է կյանքի ընթացքում՝ սոցիալականացման արդյունքում, երբ անձը յուրացնում է հասարակության գենդերային մշակույթը, «տղամարդկային» և «կանացի» վարքի ձևերը, հարաբերությունները, նորմերը, արժեքները և գենդերային կարծրատիպերը:

Գենդերային սոցիալականացումը հասարակության գենդերային մշակույթի յուրացումն է անձի կողմից և սեռերի տարբերությունների սոցիալական կառուցավորումը: Գենդերային սոցիալականացումը տեղի է ունենում ընտանիքի, նախադպրոցական հիմնարկների, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների, շրջապատի, եկեղեցու, աշխատանքային կոլեկտիվների, ԶԼՄ-ների միջոցով:

Գենդերային սոցիալականացման կարևոր ինստիտուտներից է ընտանիքը: Այստեղ է երեխան ստանում միջսեռային փոխազդեցության առաջին փորձը: Երեխայի վրա մեծ ներգործություն ունի ծնողների օրինակը, նրանց փոխհարաբերությունները, փոխադարձ սերն ու հարգանքը: Երեխաների նկատմամբ հոր և մոր հոգատար վերաբերմունքը, դաստիարակության հիմքում դրվող սկզբունքները կատարելատիպ են հանդիսանում երեխաների համար, հետագայում նպաստելով իրենց իսկ ապագա ընտանիքների կերտմանը:

Երեխաների վրա խիստ բացասաբար է անդրադառնում ընտանիքում անառողջ մթնոլորտը: Եթե ընտանիքում չկա հարգանք միմյանց նկատմամբ, եթե ծնողներն անընդհատ վիճում են, երեխան հոգեբանական կամ ֆիզիկական բռնության ականատես է, ապա դա խիստ բացասաբար է անդրադառնում և՛ տղաների, և՛ աղջիկների վրա:

Երեխան ընդգրկվում է կրթության համակարգում նախադպրոցական և միջնակարգ ուսումնական հաստատությունների միջոցով: Կրթության համակարգը նույնպես կարևոր դերակատարում

ունի գենդերային սոցիալականացման գործում: Այն կարող է նպաստել գենդերային հավասարության հաստատմանը, կամ, ընդհակառակն գենդերային խտրականությանը նպաստող կարծրատիպերի վերարտադրությանը: Հաճախ դպրոցն ամրապնդում է արդեն հնացած գենդերային կարծրատիպերը, խոչընդոտում այս կամ այն խմբի ինքնադրսևորմանը, իրավունքների և պարտականությունների հավասար բաշխմանը:

Բացասաբար է ազդում երեխայի սոցիալականացման վրա նաև ընտանիքում և հասարակության մեջ առկա գենդերային խտրականությունը. մի գործելակերպ, երբ մեկ սեռին նախապատվություն է տրվում մյուսի համեմատությամբ: Հասարակության մեջ և ընտանիքում խտրականության են ենթարկվում ավելի շատ կանայք:

Բ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գենդերային խտրականություն նշանակում է «սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում տղամարդկանց և կանանց՝ անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

Գենդերային խտրականությունը լինում է բացահայտ և թաքնված: Բացահայտ խտրականություն է, երբ սեռի սկզբունքով տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումը օրենսդրորեն ամրագրված է լինում: Թաքնված խտրականության դեպքում այն առկա է պրակտիկայում, սովորույթներում, ավանդույթներում:

Ինչպես վերը նշվեց, երեխաներին փոքրուց են սովորեցնում՝ ինչպես պետք է պահի իրեն տղան և ինչպես աղջիկը, ինչ է նշանակում լինել տղամարդ, և ինչ է նշանակում լինել կին:

Սակայն կնոջ և տղամարդու դերերը հասարակության մեջ կարող են փոփոխվել: Այդ դերերը կապված են հասարակության տնտեսական և քաղաքական զարգացումից: Այսօրվա սերունդների կյանքի պայմաններն ու իրողությունները տարբերվում են նախորդ սերունդների կյանքից: Բայց գենդերային կարծրատիպերը, որոնք ավելի դանդաղ են փոփոխվում, թելադրում են գենդերային նորմեր, որոնք սահմանափակում են մարդկանց հնարավորությունները, խոչընդոտում նրանց հասարակական և ընտանեկան կյանքում լիարժեք և ակտիվ դերի կատարումը:

Գ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Գենդերային բռնությունը գենդերային խտրականության ծայրահեղ և ամենաայլանդակ դրսևորումներից է: Այն բավականին բարդ երևույթ է: Գենդերային բռնությունը տեղի է ունենում ցանկացած հասարակությունում և ագրեսիայի տարատեսակներից է: Այն ուժի գործածում է սեռի հատկանիշով: Գենդերային բռնությունն արտահայտվում է խոսքային վիրավորանքներից և սպառնալիքներից մինչև դրանց իրագործումը:

Գենդերային բռնությունը բնութագրվում է որպես սեռի հատկանիշով պայմանավորված ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի բռնության որևէ տեսակի կիրառում: Գենդերային բռնության թիրախ ավելի հաճախ դառնում են կանայք, ինչը կանանց սոցիալական, հոգեբանական և տնտեսական ստորադասության արդյունքն է: Գենդերային բռնությունը կանանց և տղամարդկանց ոչ հավասար իրավունքների և հնարավորությունների հետևանք է: Գենդերային հավասարության խրախուսումը կարող է դեկլարատիվ բնույթ կրել, եթե հասարակությունում իրական պայքար գենդերային բռնության դեմ չմղվի:

Գենդերային բռնությունը ոչ միայն բացասաբար է ազդում կանանց և աղջիկների կյանքի վրա, այլև տղամարդկանց և տղաների զարգացման խոչընդոտ է դառնում: Տղաների գենդերային սոցիալականացման հետևանքով նրանք հակվում են ագրեսիայի, տիրապետում է արտաքին աշխարհի թշնամական ընկալումը, ինքնագիտակցության մեջ աններդաշնակություն է ներարկվում:

Բռնությունը հասարակական չարիք է: Պատահական չէ, որ շատ երկրներում կանանց բռնության դեմ ակտիվորեն հանդես է գալիս Եկեղեցին:

Գենդերային բռնության տեսակները բազմազան են: Դրանցից են՝

- սեռական բռնություն.
- ֆիզիկական բռնություն.
- էմոցիոնալ և հոգեբանական բռնություն.
- սոցիալ-տնտեսական բռնություն.
- մարդկանց վաճառք և ստրկություն.
- վտանգավոր ծիսակատարություններ:

Սեռական բռնության տարատեսակներն են բռնաբարությունը (այդ թվում՝ ամուսնականը), երեխաների սեռական այլասերումը, հարկադրական սադոմիան, սեռական շահագործումը, հարկադրված մարմնավաճառությունը, սեռական ոտնձգությունը, պատերազմների ժամանակ սեռական բռնությունները՝ որպես ճնշման և կտտանքի ձևեր:

Ֆիզիկական բռնության տեսակները նույնպես բազմազան են: Դրանք արտահայտվում են ֆիզիկական հարձակումներով (ծեծ, խոշտանգում, խարանում, սպանություն):

Էմոցիոնալ և հոգեբանական բռնության տեսակները շատ տարածված են, թեպետ հաճախ լուրջ ուշադրության չեն արժանանում: Դրանք արտահայտվում են զանազան տիպի՝ խոսքային և ոչ խոսքային վիրավորանքներով, ստորացումներով, մարդկային ար-

ժանապատվության ոտնահարումով, ազատությունից զրկմամբ և այլն: Դրանց հետևանքները նույնքան վտանգավոր են, որքան ֆիզիկական կամ սեռական բռնության դեպքում:

Սոցիալ-տնտեսական բռնության տեսակներն են կանանց և աղջիկների կրթության խոչընդոտումը, խտրականություն և/կամ հնարավարությունների, ծառայությունների մերժումը, իրավական բնույթի խոչընդոտները և այլն:

Գենդերային բռնությունը գոյություն ունի բոլոր մշակույթներում, հավատքներում, դասակարգերում և սոցիալական խավերում, գործադրվում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց նկատմամբ բոլոր տարիքներում: Ավելի հաճախ բռնության ենթարկվում են կանայք: Կինը կարող է բռնության ենթարկվել կյանքի տարբեր փուլերում՝ մանկության, պատանեկության, վերարտադրողական տարիքում, հասունության, ծերության շրջանում:

Դ. ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Ներընտանեկան բռնությունը գենդերային բռնության տեսակներից մեկն է: Ներընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի անդամների, այդ թվում՝ սեռական զուգընկերների միմյանց նկատմամբ կիրառվող ֆիզիկական, հոգեբանական, սեռական կամ տնտեսական բռնությունը:

Ներընտանեկան բռնությունը ձեռքբերովի վարքագիծ է (բռնացողը տեսել է դրա դրսևորումները տանը, ընտանիքում, համայնքում, դպրոցում, ընկերական շրջապատում և ընդօրինակում է՝ հաճախ համարելով դրանք ազգային յուրահատկություն): Դա կարող է խորանալ (ոչ թե առաջանալ) հիվանդությունից, ժառանգականությունից, ոգելից խմիչքներից և թմրանյութերից, ինքնատիրապետման պակասից, տնտեսական խնդիրներից, զայրույթից, սթրեսից, հարաբերության մեջ զոհի վարքագծից կամ այլ խնդիրներից:

Ներընտանեկան բռնությունը երկար ժամանակ դիտարկվում էր

որպես երևույթ, որը վերաբերում է անհատի կյանքին և հասարակության ներազդման չի պատկանում: Սակայն դրա մեծ ծավալը, ժողովրդավարության խորացման արդյունքում քաղաքական օրակարգի հարստացումը, կանանց շարժումները շատ երկրներում ստիպեցին ուշադրություն դարձնել դրան: Մի քանի տասնյակ տարիներ առաջ երևույթն արժանացավ նաև համաշխարհային հանրության լուրջ ուշադրության:

Գենդերային բռնությունը գենդերային ստորադասության արդյունք է: Հինգ խնդիրներ են մշտապես կապվում ներընտանեկան բռնության բարձր մակարդակ ունեցող հասարակությունների հետ՝

- տղամարդու կողմից կնոջը «սեփականաշնորհելու» նորմերը.
- ընտանիքում եկամտի վերահսկումը տղամարդու կողմից.
- տղամարդու առնականության պատկերացումը՝ կապված գերիշխանության և պատվի հետ.
- «կանացիության առասպելը» և դրանից բխող պատկերացումները, որոնք անմիջականորեն կապվում են կանանց ենթակայության կարծրատիպի հետ.
- որոշումների կայացման վերահսկումը տղամադու կողմից:

Ե. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գենդերային բռնությունը դժվար բացահայտվող հանցագործություններից է, քանի որ բռնության ենթարկված կանայք լռում են այդ մասին: Դա ունի իր պատճառները.

- զոհերը ամաչում են պատմել դրա մասին, հատկապես, երբ բռնության գործադրողը հարազատ մարդ է,
- զոհերը հաճախ իրենց մեղավոր են զգում իրենց իսկ դեմ կիրառված բռնության համար,
- բռնության ենթարկված կանայք վախենում են բռնացողի վրեժից,
- ոստիկանությունը, իրավապահ այլ մարմինները պաշտպա-

նելու փոխարեն հաճախ իրենք են նոր հոգեբանական խեղման պատճառ դառնում,

- ներընտանեկան բռնության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքն այն վերածում է սովորական կենցաղային երևույթի, կանայք հաշտվում են ցավի և նվաստացման հետ,
- գենդերային կարծրատիպերը թույլ չեն տալիս, որ դրա մասին պատմեն նաև տղամարդիկ, քանի որ տղամարդու համար ամոթ է համարվում թույլ լինելը:

Բռնությունը բռնություն է ծնում:

Մարդիկ, որոնք բռնության են ենթարկվել կամ ականատես եղել դրան մանկական տարիքում, հաճախ ագրեսիայի հակում են ձեռք բերում: Գիտնականները պարզել են հետևյալ օրինաչափությունը. որքան հաճախ են կանայք կամ տղամարդիկ մանկության տարիներին ենթարկվել կամ ականատես եղել ֆիզիկական բռնության, այնքան բարձր է եղել հետագայում բռնության կիրառման հավանականությունն իրենց ընտանիքում:

Ներընտանեկան բռնության տեսարանները, երբ ծնողները ծեծում են միմյանց, նույնպես համարվում է բռնություն երեխայի նկատմամբ, քանզի այդպիսի տեսարանները ծանր են անդրադառնում երեխաների հոգեկան աշխարհի վրա: Ապացուցված է, որ այդպիսի երեխաներից շատերը հետագայում ունենում են լուրջ հոգեբանական խնդիրներ՝ դեպրեսիա, հարբեցողություն, թմրամոլություն և այլն:

Բացի այդ, երեխան կարող է ագրեսիվություն ձեռք բերել և այն արտահայտել ինչպես իր հասակակիցների, այնպես էլ ընտանիքի մյուս անդամների հանդեպ: Տանը կատարված բռնությանն ականատես դարձած երեխաների գիտակցության մեջ այդ դեպքերը խորապես տպավորվում են՝ դառնալով ազդեցիկ, երկարատև հիշողություն: Մանկան պատկերացումը կարող է ձևափոխել այն: Այն կարող է այլ կերպ հասկացվել, դառնալ գենդերային նորմ՝ «սա այն է, ինչ հայրերը անում են մայրերի նկատմամբ», «ամուսինը կարող է ծեծել կնոջը»: Այսպիսով՝ շատ հաճախ երեխաների երևակայության մեջ բռնությունն ու սերը նույնացվում են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Եկեղեցի և ընտանիք. Եկեղեցին՝ փրկության միջոց 7

Քրիստոնեական իդեալ. Ինչին պետք է ձգտի որիստոնյան.

Հավատ, հույս սեր 14

Քրիստոնեական առաքինությունների և մոլությունների դերը քրիստոնյա անհատի ձևավորման գործում 22

Երեխայի դաստիարակությունն ըստ Հայ Եկեղեցու արժեհամակարգի 29

Քրիստոնեական արժեքները հայ ընտանիքում 35

Հոգևոր-բարեպաշտական սովորությունները և դրանց դերն ընտանիքում 43

Հայ հասարակության գենդերային հիմնախնդիրը 52

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏԱՆԻՔՆ ԻԲՐԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ

Գիրքը հրատարակության է պատրաստել
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը

Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը
շնորհակալություն է հայտնում բոլոր այն անձանց,
ովքեր նպաստել են գրքի կազմությանը:

Պատվեր՝ : Տպաքանակ՝ :

Տպագրված է «**Տիգրան Մեծ**» հրատարակչություն ՓԲԸ տպարանում